

ՄԵԼՅԱՆ ԲԱՍԱԲԵԿ

ԼԵՎՈՆ ԲԵԿ



ԵՐԵՎԱՆ - 1999



ԼԵՎՈՆ ԲԵԿ
ԼԵՎՈՆ ԱՐՏԵՄԻ ՄԵԼԻՔ-ԱՎԱԼՅԱՆ
(1879-1962)

ՄԵԼՅԱՆ ԲԱԼԱԲԵԿ

ԱՍԵՏ

ԼԵՎՈՆ ԲԵԿ

(ՆԱՄԱՌՈՏ ՆՈՒՇԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ
ԴՐՎԱԳՆԵՐ ԿՅԱՆՔԻՅ)

A II
85337

ՈՒ ՉՄԱՆ ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐԸ ՆՍՏԱԾ
ԽՈՍՈՒՄԵՆ ԼՈՌՈՒ ՀԻՆ-ՀԻՆ ԶԱՋԵՐԻՅ:

/ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՎՍՏԱՆ, ԵՍՏ

Մելյան Բալարեկ: ԼԵՎՈՆ ԲԵՎ: (համառոտ հուշավավերագրական
դրվագներ կյանքից):- Ե; 1999. , ~~75~~ էջ, նկարներ:

ԼԵՎՈՆ ԲԵՎ - Լևոն Արտեմի Մելիք-Ավալյան, իր իսկ քառերով ասած. մի
հայասիրությամբ ու հայրենասիրությամբ վառվող, մորմոքվող հայապաշտ մարդ
էր: Դժվար է ասել, թե՞ նա զինվորակա՞ն էր, թե կապիտանի կոչում էլ է ունեցե՞լ, թե՞
պետական պաշտոնյա: Բայց ապրել է մի հերոսական, փառավոր, ողիսական
կյանք: Իր գլխակցական կյանքը նվիրաբերել է հայի, Հայաստանի
պաշտպանության ու փրկության գործին: Սակայն հենց այս էլ նրան զրկել է
հայրենիքում ապրելու հնարավորությունից և ստալինյան բռնադատության
պատճառով անդաստանական-պանդիտական կյանք է ունեցել հասուն
տարիքում, երբ իր վատակը պետք է նրան ապրեցներ խաղաղ ու ապահով իր
հայրենի, իր իսկ ձեռքով շինած կտուրի տակ: Դրա փոխարեն նա բազում տեղ
տուն ու տեղ, շեն ու տանիք է ստեղծել: Սակայն վերջում մահացավ
քափառականի պես, ուրիշի դռան, ողջ աշխարհը ոտքի տակ տալուց հետո՝ 1962թ.
Երևանում, և միայն ու միայն քախտավոր է նրանով, որ արժանացավ հայրենի մի
կտոր սուրբ հողում ամփոփելու իր մահկանացուն, իր հետ երկար տարիներ
քափառ կյանքով ապրած կնոջ՝ Օլգա Ավալյանի շիրմի հարևանությամբ:

Սակայն նրա անունը երկար- շատ երկար կիիշվի հայոց պատմության ոսկե
մատյանի մի անկյունում ու ժողովրդի հիշողության մեջ:

Գրել ենք շուրջ 300 էջ մեքենագիր հուշավավերագրական մի գործ: Դրանից
ընտրեցինք միայն այսքանը: Եթե մեկը կցանկանա ավելին տպագրել կամ
նպաստել մեր գործի լույս աշխարհ գալուն, պատրաստ ենք օգնել:

Բալարեկ Մելյան 29 հունվարի 1999թ.

ք. Երևան

Մարտնչող մորկահավը

Հարևաններ էինք այն հեռավոր տարիներին. նրանց դաստակերտը ձորահայաց բարձունքին էր, մեր հողածածկ գլխատունը բարձունքի փեշին: Մովսես հորեղբայրս յոթ երեխաներից ամենաաչքաբացն էր, նա արժանավոր գավակի մանկության ընկերն էր: Ամռան շոգ օրերին միասին լողանում էին Տավուշ գետում, արևկող անում որձաքարերի վրա: Տարիներ անց մի խումբ կտրիճներ, Լևոնի գլխավորությամբ, գիշերը շրջապատեցին Ղաչաղ թուրքի ոհմակը, շանաստակ արեցին գողերի գլխավորին և ազատեցին աղանց Բեկի նախիրը: Կռվում կոփված բարեկամությունը խորացավ: Իրողություն է, որ կյանքի պահանջով, հետագայում ժողովրդական հերոսները դառնում են լեգենդներ, ուղեկցում ապրողներին:

Ատաղծագործ հորեղբայրս ուրախությամբ ժամերին հնչեցնում էր իր սագի լացակունած լարը և տխրադեմ արտաբերում. «Լևոնի արևը վկա, երդվում եմ նրա անունով, որ պատմածս իրական դեպք է: Մարդավայել ապրելու համար հարկավոր է հպարտ ապրել, չդառնալ քանուց խոնարհվող եղեգ: Այդպիսին էր մեր շրջանի մարտնչող մորկահավը: Հավերժող լեռներում թևածող արծիվն իր թևերի տակ աստղեր է պահում, լուսավորում է ճերմակ աղավնիների անցնելիք ուղին»:


Լևոն Բեկը հաճախակի հիշեցնում էր իր մարտական ընկերներին, որ գողությունը կործանարար ցեց է, որ տարածվեց, այլևս առաջն առնել չի կհնի:

1920 թվականին մենք՝ կիսամերկ ու ոտաբոբիկ մանչուկներս, ապետ հերոսին տեսնելիս երգում էինք մեր տափկների հյուսած երգը. «Եկավ, հասավ Լևոն Բեկ, հագարի մեջ միայն մեկը»: Քառասուն տարի անց, երբ տարեգիր հերոսը վերադարձավ Բերդ, հորեղբայրս շտապեց բարի գալուստ մաղթելու իր անգուգական ընկերոջն ու հեռատես հրամանատարին: Նա շատ ու շատ մանուկների է փրկել թուրքի սրից:

Այդ մահասարսուռ տարիներին Շամշադինի հողագործների պատիվը պահող քաջագունների տարած հաղթանակը՝ Լևոն Բեկի գլխավորությամբ, ծիածանվեցին տեղացիների հիշողության հեռաստանում՝ դառնալով հիշարժան հաղթանակի ավետաբեր արշալույսներ: Սերմնացանները սիրեցին ու գնահատեցին իրենց հերոսի սխրանքները, ժողովրդի հիշողությունը ոսկե մատյան է, երբեք չի ժամգուտվում ժամանակի ուրաններում:

Փառք հաղթող հերոսներին... Եվ թող Լևոն Բեկի ու նման հայրեցասերների անունները հավերժ թևածեն Տավուշ աշխարհի երկնակամարում, որի օրինակը կլինի այս գրքույկը:

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Հայրենական պատերազմի վետերան,
Հանրապետության վաստակավոր ուսուցիչ,
ժուռնալիստների միության անդամ



Ժողովրդի հիշողությունը

*Շամշադինցիները հերոս ժողովրդի
ժառանգորդներ են*

Մեծահարուստ Ալեքսանդր Ջաղերյան¹

Լևոն Բեկ անունը երբեք չի ջնջվի մեր ժողովրդի հիշողությունից և կվախճանվի սերնդից սերունդ: Դրա վկայությունը չէր արդյաք, որ շուրջ յոթ տասնյակ տարիներ արգելվել են նրա և այդպիսիների մասին խոսելը, բայց մարդիկ, նրան ճանաչողները իրենց հոգու զաղամարանում ամուր պահել են և հարմար պահին, ոչ միայն խոսել, այլ արդեն գրքերում, սյարբերականներում բազմաթիվ անգամ գրել, ներկայացվել են նրանց կյանքից առանձին դրվագներ: Տոկերիս հեղինակը նույնպես մի քանի սուիքներով գրել է Լևոն Բեկի, Մելունց Շամիրի և այլոց մասին: Հատկապես նշվել է նրանց հայրենասիրական, հայաստահայանության, ռազմավարական գործունեությունը: Հատկապես Տավուշ աշխարհի հայ բնակչությանը մեր հարևան վայրագ, քոչվոր, քարաքամա (Բաֆֆու բառն է) Թաթարներից փրկելու ստումով, որին մեծ նվիրվածություն, վստահություն և օգնություն է ցույց տվել ժողովրդի ընտրանի, հասկացող, գրագետ խավը: Այս հարցում միակարծիք ու միական էին Լևոն Բեկն ու Մելունց Շամիրը:

Ի դեպ, ասենք, որ Թիֆլիսում կրթություն ստացած լինելով, զաղափարակից լինելուց բացի նրանք այրունակից բարեկամներ էին: Շամիրը Մելունց Հակոբի (1803-1884) բռն էր, իսկ Լևոն Բեկը՝ նրա բույր՝ Ազիզի: Հակոբն ու Ազիզը 1820-30թթ. Հին-Շենում² ապրելիս բուրբ-սյարսկական-ռուսական սլատերազմների ժամանակ կորցնելով ծնողներին, ավագ եղբայրներին, ապրելիս են եղել իրենց հորեղբայր, գյուղի տանուտեր (քոխվա) Եսայու հովանավորությամբ՝ նրա տանը:

¹Մեծահարուստ Մկրտիչ (Մակի) Ջաղերյանը 1881 թ. հիմնադրել է Ղազախ քաղաքը, իսկ տղան՝ Ալեքսանդրը կառուցել է հայկական եկեղեցին (բացումը՝ 1901թ.) մուսուլմանական և ռուսական եկեղեցիներ:

²ՀՀԳՊ կենտրոնական արխիվում այդ գյուղի անունը գրված է՝ Կիզիլբուլախ-Կարմիրաղբյուր: Գտնվում էր ներկա Այգեպար գյուղի օդանավակայանի մոտ, Տավուշ գետի աջ կողմում, բլուրի քամբուցում: Այսօր էլ կան գերեզմանոցը և եկեղեցու ավերակը:

Ազիզն ամուսնացել է Բերդ գյուղի Մելիքյան տոհմից Ավագի հետ: Այս ընտանիքը բազմաթիվ սերունդներ է տվել, որոնց մասին կիսուսերք հետագա էջերում: Դրանցից են՝ դերասան Մկրտիչ Մելիք - Ավայանը, Լևոն Բեկն և ուրիշներ:

Մելիքյան տոհմից մի ճյուղ

Մելիքյանները Բերդ գյուղում /այժմ քաղաքատիպ ավան/ մեծ տոհմ են¹: Այդ տոհմի մի ճյուղը կրում է Մելիք-Ավայան ազգանունը: Հնում կարգ է եղել՝ բեկ, մելիք, իշխան տիտղոս ունեցողները պետք է կրեին երկու կից ազգանուն կամ այդ տիտղոսը պետք է նշվեր: Մեր գրելիքի հետ առնչվողներից՝ Լևոն Բեկ և դերասան Մկրտիչ Ավայանի ճյուղն են, ներկայացնում ենք միայն դրանց նախորդ Ավագ և Ավալ եղբայրների ճյուղը:

ՀՀ ՊՊ կոնտրոնական արխիվում² Շամշադինի³ հայ ու քարաք գյուղերի բնակչության մասին բավական տեղեկություններ կան սկսած 1817 թվականից: Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո հաճախակի են հաշվառում անցկացրել՝ հարկ հավաքելու և այլ նպատակով: N 157 գործում ներկայացված է 1860թ. ըստ գյուղերի բուրք աղարարների, հայ բեկերի ու հոգևորականների ցուցակները: Բեկական կոչում են ունեցել Չորաթանի Քալանթարյաններից յոթ ընտանիք, Բերդից՝ Ստեփան Թումանյանը, Մելիք-Ավայան Ներսեսը և այսպես վեց ընտանիք, Հախումի Մանուչարյաններից՝ ութ ընտանիք և այլն:

Հոգևորականներ էին՝ Դուրալի /այժմ Այգեձոր/- Տեր-Հարություն Պետրոսյանը-30 տարեկան, Մովսեսից՝ Տեր-Մարգիս Բաղայանը - 35 տ., Բերդից՝ Տեր-Խաչատուր Անանյանը-37 տ., Տեր-Մովսես Անանյանը - 30

¹ Ասում են, որ ուսուցիչ Աշոտ Մելիքյանը կազմել է իրենց տոհմաձայրը:

² "Ցուցակ Շամշադինի շրջանի հեռախոսային ցանցի բաժանորդների - 1983թ." գրքում արձանագրված է Մելիքյան, Ավայան մոտ 180 ընտանիք: Մեր ներկայացրած ճյուղը կազմել է Զնաբիկ Մամսոնի Ավայանը /ծնվ. 1923թ / տես վերջում:

³ ՀՀ ՊՊ կոնտրոնական արխիվ ֆոնդ N 93, ցուցակ N1, գործ N 157:

⁴ Շամշադինի տարածքը / պատմական Ոստիք նահանգի Տավուշը/ այդ ժամանակ ընդգրկում էր Աղստև, Կուր, Չազամ գետերը, Միափոքի լեռնաշղթայով մինչև Սևանա լճի ափերը:

տ., Թովուզից՝ Տեր-Խաչատուր Սահակի Մճբատյանը-49տ., Տեր-Հովակիմ Հարությունի Մճբատյանը-41տ., Տեր-Հարություն Գրիգորի Մուրադյանը՝ 30 տ., Հարությունի եղբայրներն են՝ Գարեգինը՝ 24տ', Եփրեմը՝ 18տ., Հովսեփը՝ 13 տ. և այլն:

Վերին կարմիրդրյուր գյուղում այդ ժամանակ բեկ² և քահանա չեն եղել: Միայն 1874թ գյուղում քահանա է գրված՝ Կարապետ Ավագի Մլիխարյանը՝ 25 տարեկան: Ներկայացվածներից մեր նյութին առնչվում է մելիք-Ավայան Ներսեսի անունը:

Արվեստին նվիրված մի ընտանիք

Մեր որոնումների, գիտական պրպտումների ընթացքում զանվել է Սկրտիչ Մելիք Ավայանի անունը³, որը 19-րդ դարի 70-80-ական թվականներից սկսած՝ հայ քաարոնի կազմակերպման ամենատեսալատավորներից մեկն էր իր ընտանիքով հանդերձ:

Նրա ընտանիքը՝ կինը, տղան, աղջիկը, աղջկա երեխաները ժամանակին նվիրվել են հայ քաարոնի և արվեստի զարգացմանը:

Արխիվային քիչ տեղեկություններ են պահպանվել, բայց կան զրբերում, մամուլում մասնակի հիշատակումներ և առանձին մատարականների հուշերում: Նրանց մասին հետաքրքրական բաներ պատմեցին Սար Ավայանը /ծնվ. 1906թ./, և Մ. Ավայանի եղբայր Ալեքսանի աղջիկ Վարդանուշը /ծնվ. 1896թ./: Երբ 1971թ. ամռանը եղա Բերդ գյուղում, իրենց տանը:

Սկրտիչ Ներսեսի Մելիք-Ավայանը ծնվել է Շամշադինի Բերդ գյուղում 1850թ., նախնական կրթություն ստացել է գյուղում: Հայրը 10 տարեկան որսում տանում է Թեադոսիա և ընդունել տալիս Խալիպյան ուսումնարանը, որտեղ ընդունում էին միայն արտոնյալ դասի

¹ Գարեգին Գրիգորի Մուրադյանը-Մելիքսեղեկ անվամբ հասել է Արքեպիսկոպոսի աստիճանի: Երեք անգամ ընտրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, բայց ցարը չի հաստատել:

² Հակոբ Տեր-Մովսեսի Մելյանին 1850թ. առաջարկել են բեկություն ստանալ: Հրածարվել է. "Ես մունճաթի հաց չեմ կերել, քող իմ սերունդն էլ չուտի"- ասել է նա:

³ Մելյան Բ. Արվեստին նվիրված մի ընտանիքի մասին: -Այգաբաց (Բերդ), 1971. 3, 5, 7, 10, 12, 17 օգոստոսի, N 92-97:

երեխաներին: Աշակերտական խռովությանը մասնակցելու պատճառով հեռացվում է: Տեղափոխվում է Թիֆլիս և ընդունվում Ներսիսյան դպրոց: Ավարտելուց հետո 20-ամյա պատանին միանում է Գեորգ Չմշկյանի քառերախմբին: Որոշ ժամանակ հետո ամուսնանում է նույն խմբի ղեկավարների Շամիրամ Անանի Անյանի /1855-1910/ հետ: Մկրտիչ Ավայանը մահացել է 1909 թ մայիսի 13-ին և քաղվել է Բարձրում: "... նա միայնակ, ամենքից մոռացված, երկարատև ծանր հիվանդությունից հետո մեռնում է նավթարդյունաբերողների խորհրդի սև քաղաքի հիվանդանոցում":

Ասում են հայը իր գործիչներին միայն լավ քաղել գիտե, բայց այդ ասացվածքն էլ չիբականացավ Մ. Ավայանի վերաբերմամբ: Նա, որ շատ անգամ էր գեղարվեստի Տաճարի բեմից ուրախացրել և լացացրել հանդիսատեսին, այդ օրը բորբից մոռացված, մի բանի ամենամտերիմ ծանոթների և պաշտոնատեղի ծառայողների ուղեկցությամբ իջեցվեց գերեզման: Չկար ոչ մի դերասան, չկար նույնիսկ պակ...

Ամենքից մոռացված նա իր հավիտենական հանգիստը գտավ նախաշխարհի գերեզմանատան անկյունքներից մեկում: Մեկ տարի անց մահացավ կինը՝ Շամիրամը, ավելի քան մոռացված, որքան ամուսինը:

Գերասաններ, որոնք խաղացել են Գ. Չմշկյանի, Պ. Այսամյանի, Մ. Մնակյանի և բեմի այլ մեծերի հետ:

Մրանց որդի Տաճարը ծնվել է 1880 թ. Թիֆլիսում: Մովսիսի և ավարտել է Ներսիսյան դպրոցը: Մակայն կարիքից դրդված ծնողները տեղափոխվել են Բարու: Ծնողների արվեստը դեռևս մանկուց մեծ սեր է ստաջացրել Տաճարի հոգում: Նրան է հետևել նաև քույրը՝ Անահիտը: 1905 թ. օգոստոսին դերասանական խումբը Ալեքսանդրապոլում բեմադրել է Մ. Թառայանի "Թարնված կայծեր" դրաման, որ 19-ամյա օրիորդ Անահիտը խաղացել է գլխավորի՝ Մանուշակի դերը: Եվ այսպես քույր և եղբայր նույնպես նվիրվել են քառյունին: Տաճարը մահացել է 1921 թ. փետրվարի 2-ին Երևանում²: Անահիտի աղջիկ արվեստագետ Գռիար Հարությունյանը մի գրուցի ժամանակ ասաց, որ երբ մահացել է Տաճարը՝ քեռու անունով քոշակ են նշանակել նրանց: Նրա կինը՝ Նինան ռուս դերասանուհի էր: Երեխա չեն ունեցել: Ամուսնու մահից հետո բնակվել է Մոսկվայում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրար կորցրել են: Անահիտը մահացել է 1945 թ վականին: Այդպիսով, այդ

¹ Թ., Մկրտիչ Ավայան: [Մահախոսական]: -Մշակ /Թիֆլիս/, 1909. 20 մայիսի, N 105 : Ստորագր.՝ Թ:

² Կոմունիստ /Եր/, 1921, 4,5 փետրվարի N 47,48:

տաղանդավոր արվեստագետների ընտանիքի շատավիղները նույնպես մարում են: Ինչպես ընդունված է ասել՝ կուլտուրական բույսերի թշնամիները շատ են լինում:

Գեո ոսանորական տարիներից Լևոն Բեկը ապրել էր նրանց տանը: Կապվել է քատյոնի և մյուս քնագավառների արվեստագետների, մտավորականների հետ: Սրանք ևս ազդել են Լևոն Բեկի զարգացման գաղափարական ու բաղաբարական հայացքների վրա: Ասել կուզի, թե Հ. Ճողոտյանի գրած "Մոռացված աշխարհ" էինք, բայց նման մարդկանցով, որոնց թիվը Տավուշ աշխարհում շատ է, դարձել ենք հայտնի: Ե՛վ իզուր չէ, որ հենում ու մահ այս ժամանակներում Երևանում սպրտող շատ մտավորականներ Տավուշը համարում են "Փոքրիկ Արցախ" քուրքի բերանում, որը կարողանում է ամեն անգամ հաղթող դուրս գալ դարավոր հարևանի դեմ պայքարում: Այս անունը վաստակելու իրավունք են ավել Լևոն Բեկն ու նմանները: Մարդիկ, որոնք օրհասական պահերին ղեկավարել են մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Հիմա եկել են այն ժամանակները, որ այդևս արգելված չէ նրանց մասին խոսելը և գրելը: Եկել են այն ժամանակները, որ նրանց դեմ խառնակները, նրանց հարածողները պետք է ամաչեն: Եթե նրանք չկան, սալա նրանց սերունդները պետք է ամաչեն, անհարմար զգան:

Գեոևս մեր մանկության օրերից մեծերից մեզ են փոխանցվել Լևոն Բեկի հերոսական կյանքից միջոցառելիք, որոնք հարկ է, որ դառնան մեր սերնդի սեփականությունը: Գա նրանց պետք չէ, այլ սպրտողներին է հարկավոր, որ միշտ անառիկ պահենք մեր հայրենի աշխարհը:

Ընդդեմ դաշաղների

Արտեմ Բեկն ամուսնացել է Բերդ գյուղացի Ստեփան Թումանյանի աղջիկ Գեղեցիկի /Արշակ Բեկի քույրն էր/ հետ: Այս ընտանիքում էլ 1879թ. մայիսի 18-ին ծնվում է մի աղա, որին կոչում են Լևոն: Գյուղում տարրական կրթություն ստանալուց հետո տեղափոխվում է Թիֆլիս, նախ ընդունվում է գիմնազիա, սալա ուսումը շարունակում է Ներսիսյան դպրոցում:

Ամառային արձակուրդի առաջին օրերն էր, նոր էր եկել գյուղ, երբ լուր է գալիս, թե իրենց անասունները կորել են, քանի օր է մահ են գալիս ու չեն գտնում: Մայրը սալսարում է, որ որդին նույնպես զնա սար և գտնեն

անասունները: Անասնապահների հետ երկար որոնումներից հետո պարզում են, որ Ալաթալա կոչվող հատվածում բուրբ-բաբերը բնակություն են հաստատել և իրենց ապրուստը հայքհայթում են հայերից գողություններ ու թալան կատարելով:

Երիտասարդ Լևոնը համարձակություն է հանդես բերում և գնում ավազակների որջը: Սրանց դեկավարը՝ դաչադ Բեշիրն ասում է, որ ստերջ անասուններն արդեն մորթել են, իսկ կրան կովերն ու գոմեշները չի տա և պահանջում է 80 ոտրլի: Գա մի այնպիսի ժամանակ էր, որ մի կովն արժեր 3-5 ոտրլի: Որքան ցանկանում է համոզել այդ ավազակներին, չի հաջողվում: Բեշիրն ասում է, թե իրենք լավ են ճանաչում Մելիք-Ավալյաններին, ցարի կողմից արտոնություններ ունեն և հարուստ են: Իրենց ուզածը շատ մեծ բան չէ:

Պատանի Լևոնը, որն ընդամենը տասնվեց-տասնյոթ տարեկան էր, փոքր ու փռշտան գալիս է գյուղ: Պատմում հարազատներին ու ընկերներին: Գալիս են այն համոզման, որ պետք է դիմեն գեներլի: Նրա վճռին են միանում իր ազգակից, ուսանող ընկերները և նաև մոտակա այլ գյուղերից: Նրանք զինվում են, 15-20 հոգով, գնում այդ տարածքը հետազոտում: Նրանց պայքարը հաջողությամբ է ավարտվում և սպանում են Բեշիրին և նրա խմբից մի քանիսի: Այդպիսով, նրանք իրենց անասունների հետ յուրս են բերում նաև գողացված այլ անասուններ:

Այս դեպքը իր փեսա Գուրալի գյուղացի Շրականց Հանեսը, որը ժամանակին աչքի ընկնող դեմքերից մեկն էր, տեղյակ է պահում Գազախ-Շամշադիների գավառապետին: Գրանց դեմ իշխանությունները շատ անգամ էին ցանկացել պայքարել ու ավազակների այդ որջը ոչնչացնել՝ չի հաջողվել, բայց սհա մի պատանի կարողացել է առանց զոհեր տարու անել այդ բանը: Գավառապետը Լևոն Բեկին կանչում է Գազախ, պարզևատրում և ապա ստաջարկում է աշխատել իր մոտ: Նա այդ պահին չի համաձայնվում, պատճառաբանելով սովորելու հանգամանքը, բայց ավարտելուց հետո սկսում է աշխատել: Նրա հերոսական շնորհների մասին իմանում է նաև Գանձակի նահանգապետը: Հրավիրում է և նշանակում ավելի բարձր պաշտոնի: Այն է Թովուզ երկաթուղային կայարանի և նրան հարող տարածքների պրիստավ /գավառապետ/:

Այս պաշտոնում եղած ժամանակ իր նախածեղոնությամբ ոչնչացնում են նաև մյուս ավազակապետին Նաբուն¹: Ասել է, թե հայերին ազատում է դաչադների թալանից: Նոր գավառապետը նահանգապետի

¹ Աղբյուրում ավազակ Նաբուն հերոսացրել են, նույնիսկ օպերայի հերոս դարձրել, երգում, փառաբանում են նրան:

խրախուսանքներին ու պարգևներին է արժանանում, քանի որ նրանք տարիներ շարունակ հետապնդել են ոչնչացնելու, բայց իրենք գտել տարով չեն կարողացել կատարել այդ խնդիրը:

1905թվականի հայ-թուրքական կռիվները

Յարական կառավարությունը զգալով հասունացող հեղափոխական ընդվզումների ալիքների բարձրացումը կազմակերպում է փոքր, հարևան ժողովրդների միջև ընդհարումներ: Նման կռիվ է սարքվում նաև հայ ու բուրբ բնակչության միջև: Այդպիսի մի լայն ծավալի ճակատ է ստեղծվում Ղազախ-Շամշադիների տարածքում ապրող հայ ու քաքար բուրբերի միջև: ԵՎ քանի, որ հարևան բուրբերը այնքան էլ վարժ չէին պատերազմների մեջ, սպա կազակների կադրային զինվորների ջոկատներ է միացնում բուրբերին: Նրանց գլուխներին ևս փաթաթում թուրքական չալմաներ:

Նախքան կռիվներն սկսելը՝ ճակատի բացումն թուրբերը սրի են քաշում հայկական Կրզեն, Բադա, Բանանց և այլ գյուղերի բնակչությանը: Հրդեհում տները: Կրզենի գյուղապետ Հովհաննես Մայիլյանին և գյուղի աչքի ընկնող աղամարդկանց խաբելով հրավիրում են մոտակա բուրբի գյուղը և մեկուսացնելով կոտորում: Բնակիչների մի մասը կարողանում է զիշերը հասնել Շամշադիների հայկական գյուղերը և ապաստանել այնտեղ: Բադա, Բանանց գյուղերից խմբերով, լեռների վրայով ու ձորերով հասնում են Խորանաշատ վանքը: Շամշադիների հոգևորականները, տանուտերը, ունեռքները նրանց ապաստան են տալիս Չինարի, Ղուլալի, Չորաքան, Ղրղի, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն և մյուս գյուղում: Այդ տարածքից միայն Չարդախլուրի գյուղացիները դիմադրում են թուրբերին և իրենց գյուղը չեն լքում:

Շամշադիցիներից յուրաքանչյուրը իրենց նեղ հնարավորություններից օգնության ձեռք են մեկնում գաղթականներին¹: Սրանց խլակներից Իջևանի-Ղարաքիլիսայի վրայով հասնում են Թիֆլիս, իրենց հարազատների ու ծանոթ-բարեկամների մոտ:

Ի դեպ շամշադիցիների օգնությունը շարունակվում է 1915 թվականից այնտեղ հասած Արևմտյան Հայաստանի փախստականներին, որը տևում է մինչև 1921 թվականը: Ծառ ընտանիքներ հիմնականում հաստատվում են ու բնակվում Շամշադիների գյուղերում:

¹ Զաջբերունի: Բադա գյուղի ավերումը: - Վաղարշապատ, 1910, 80 էջ:

Զաջբերունի: Կրզեն գյուղի ավերումը: - Արարատ, 1911, N 10, 11, 12, 1912, N 1:

Նրանց սերունդները մինչև այսօր էլ կան:

Տարի անկումից հետո, բուրբական ռազմաճակատի ռուսական զորքերը լքելով դիրքերը, ետ վերադառնալիս անցնում են Շամշադինի անտառներով: Տեղացիները ոչինչ չէին խնայում նրանց համար: Տարեց մարդիկ մշտապես հիշում էին ռուս զորքի դեմ բուրբերի կատարած վայրագությունները, Շամխարում¹ և այլ վայրերում նրանց զանգվածային ոչնչացումները:

Առաջ ընկնելով գրենք, որ Լևոն Բեկի հայրը՝ Արտեմ Բեկը Ելիզավետապոլ /Գանձակ/ քաղաքում ուներ հսկայական շինություն ու տարածք: Լևոն Բեկը այն դարձնում է գաղթականների ապաստարան և բացում որբատուն՝ 1915թ. մեծ եղեռնից փրկվածների համար: Նրանց սերունդներից հիմա ապրում են Երևանում և սոփյի դեպքում սլատմում այդ մասին:

1905 թ. հայ-բուրբական կռիվներին մասնակից հայերը սլատմում էին, քե ներկայիս Այգեպարից ներքևի սահմանի ուղղությամբ՝ Չիմարի գյուղի վերևի անտառներից սկսած՝ մինչև Պառավաքար /այն ժամանակ հայկական Թաթու, կար և քաքերի Թաթու/ գյուղերը Շամշադինի ժողովուրդը ճակատ կազմած, Լևոն Բեկի ղեկավարությամբ դիմադրում էր բուրբ-ռուսական զորքին: Գազախ- Շամշադինի ընդհանուր ճակատը ղեկավարում էր Սեբաբեցի Սաբոն: Ամբողջ ճակատով մեկ, սլայմանավորված մի պահի, երբ Լևոն քեկն անցնում էր բուրբական Ալիբեյլու գյուղի մոտի դիրքերից, ակտիվ զինվորներից մեկին՝ բեյլցի Գրեանանց Համբարձումին /Համբարձում Ալեքսանի Թումանյան/ հրահանգում է, "խրամառից բարձրացիր վեր, գոտարով ու կրակելով բռիր այգու ցանկապատից ու առաջ գնա: Չորքը հետևելու է քեզ: Թուրքերը խուճապի մատնված փախչելու են: Եթե գոհվես էլ, ոչինչ, Տավուշը շատ բան չի կորցնի, բայց քո համարձակ քայլով կփրկենք այս աշխարհը": Նրա կանչին ու կրակոցին ամբողջ ճակատով, ինչպես գետնի տակից հորդացող հրաբուխ, զորքը հետևում է Համբարձումի օրհնակին: Թշնամին անակնկալի գալով չի հասցնում կրակել: Թաթարները լքում են դիրքերը և փախուստի դիմում: Կովի մասնակից Սահակ Աբրահամի Չոբանյանը /Վ. Կարմիրաղբյուրից, ծնվ. 1876թ./ սլատմում էր. "մեր զինվորները նրանց շատ վնասներ տվեցին: Հրդեհեցին տներ, մարագներ, սպանեցին ծերերի, որոնք չէին կարողացել հեռանալ: Այդ արեցին հատկապես Արևմտահայերը, որոնք վրեժով էին լցված նրանց դեմ: Այս հետապնդումը հասցվեց մինչև Կուր գետը, որի

¹ Շամխարի դեպքերը 1918: - ՀՍՀ, Հտ 8, էջ 443:

ափին է գտնվում հայկական Կրգեն գյուղը և դրա հետ ազատագրեցին այդ տարածքը”:

Հետագայում, ցավոք, Ռուսաստանի ու մեծ ափրոսյունների միջամտությամբ սահմանները “կանոնավորվում են” ի վնաս հայերի և եւս վերցված պատմական Հայաստանի տարածքները հանձնվեցին թուրքերին:

Դե՛, որանդ կոխվներ, այնուեղ էլ զոհեր, բայց բարեբախտաբար հայերը քիչ զոհեր են տալիս: Թուրքերից ու կազակներից լինում են բազմաթիվ զոհեր: Այդ բանի պատճառով, Թիֆլիսում դատում են Սևբարեցի Սարոյին, Լևոն Բեկին և մի բանի այլ նշանավոր հայերի և որոշում, որ հայերը կազակների արյան գինը պետք է վճարեն: Հայ մեծահարուստներից և շամշադիներից հավաքում են անհրաժշտ գումարը և վճարում: Այդ մասին ավելի մանրամասն ու հետաքրքիր է ներկայացրել մեր հայրենակից, գրող Մաքեոս Գարբիւնյանը իր “Վերջինը” վեպում:

Այսպես, թուրքը հասկանում է, որ հայն էլ մարդ է, կարող է կովել ու հաղթել:

Այս առիթով 1907թ. գարնանը, Վիեննայում կայացած դաշնակցության 4-րդ համաժողովում Մարոն համարձակ կերպով հայտարարում է և նշում, որ մինչև այդ թուրքը հային բանի տեղ չէր դնում, հիմա ինքն է որոշ հարցերում խնդրում, որ իրենց օգնենք:

Հետաքրքրական էր, որ կովից առաջ նրանց սուրբանը հայտարարում էր .

-Նախաճաշը Քոստարարում¹ կանենք, ճաշը՝ Բերդում, իսկ ընթրիքը Նավորում: Հետագան ավելի հեշտ կլինի, դժվարը Շամշադինի հայերին հաղթելն է:

Հետագան, որը ըստ նրա ավելի հեշտ էր լինելու, հավանաբար այն լինելու էր Ճամբարակով, Իջևան - Գիլիջանով Սևանի տարածք հասնելն էր:

Գլխավոր մայրաղին վերցնելուց հետո կարող էին շարժվել դեպի Երևան...

Սեր օրերում էլ ախմար էլչիբեյը հայտարարեց, քե կանցնի Սևանա լիճը և Իշխան ձուկ կվայելի “Ախթամար” ռեստորանում:

Ներկայումս դեռ նրանք երազում են Տավուշ աշխարհը իր սարերով ու անտառներով հայաթափել, որպեսզի Միափորի լեռնալանջի

¹ Քոստալը Ներքին Կարմիրաղբյուրի հին անունն է: Եղել է նաև Քոստալար անունով թուրքերի գյուղ:

մարգագեալինները, արոտավայրերը, սառնորակ աղբյուրները դարձնեն իրենց: Եվ այս միտքը, թե հայերը եկվոր են, նրանք գրավել են իրենց ամառանոցները և իրենց զրկել բնության այդ հրաշքից: Այդ ցանկությունը սերնդից-սերունդ մշտապես փոխանցվում է: Նրանք մոռանում են, որ մեր պատմական հուշարձանները, վանքերն ու եկեղեցիները շատ վաղուց են կառուցվել: Գրանք այնքան հին են, որ դեռ թուրք չկար Կուր գետի հովիտներում: Անցյալ դարի պարբերականները գրում են, որ Շամշադինում ապրում են հայեր, շիա թուրքեր և աղանդավոր ռուսներ՝ մալականներ: Ամենահին բնակիչները հայերն են, որոնց 12-րդ դարի հնությունները հաստատում են, երկրաբան՝ թուրքերը, որոնք իբրև այստեղ հաստատվել են Չինգիզ-Խանի ժամանակներից, իսկ ռուսների այստեղ հաստատվելը արդեն 40 տարի է:

Բոլոր ժողովուրդն էլ, առանց բացառության, խորին ազիտության, անշարժության ու նահապետական ավորությունների մեջ են մնացել՝:

Մակայն եկել է նաև ինքնագիտակցության, զարթոնքի դարը: Հայի սրտում կենդանություն է առել իր նախնիների ազատատենչ ոգին՝ անկախ պետականության համար:

Լևոն Բեկը նվաճել էր ժողովրդի սերը

Երբ դրությունը 1905 թ. սրվել էր Լևոլ Բեկը մեկուսացավ իր պաշտոնից և անցավ հայերի կողմը: Հարկավոր էր ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության: Մակայն, դա այնքան էլ հեշտ խնդիր չէր: Աշխատանքով, նվիրվածությամբ են հասնում արժանանալու ժողովրդի սիրուն: Մինչև հայ-թուրքական կռիվները Լևոն Բեկը 52 հայկական, թուրքական, նաև մալականների գյուղերի համար պատասխանատու էր՝ սրիստավ: Նրա անմիջական միջամտությամբ, կարգադրությամբ էր լուծվում ամեն մի հարց, վեճ, դատ, դա լինե՞ր ծագած հայի, թուրքի թե՛ մալականի միջև: Նա շատ դեպքում էր օգնության հասել աղքատին, սնանկին, դժբախտության մեջ հայտնվածին: Ականատեսները պատմում են, որ իր հաշվին, Նավուր գյուղի տակից, խմելու ջրատար է անցկացրել, որից ազատորեն օգտվել են այդ թաղի բնակիչները: Որպեսզի պատկերացնենք դրա դժվարությունը, մի պահ

¹ Գասպարյան Յ. Շամշադինի վիճակի հայերը: - Նոր Դար, 1888, 22 դեկտեմբերի, N 216, էջ 2:

միայն հիշենք այն ժամանակ: Ժանը տնտեսական պայմանները, տեխնիկայի բացակայությունը, խողովակներ ճարելու, ապա դրանց տեղափոխման հետ կապված բարդությունները: Իսկ, երբ եկավ պատմական այն ժամանակը, որ այլ կարգեր հաստատվեցին, նրան գրկեցին անգամ իր բերած ջրից օգտվելուց, կառուցած տանը ապրելուց: Իր ազատագրած հայրենիքում ապրելու իրավունքից: Տունը "նվաճեց" համայնավոր՝ կոմունիստ համարված մեկը, ջուրը տեղափոխեց իր տունը, քաղի բնակչությանը գրկելով ջրից:

Լևոն Բեկի մասին շատ հուշեր ենք գրի առել, որոնք պահպանվում են մեր արխիվներում: Այդ ամենի մասին հիմա ներկայացնել հնարավոր չէ: Նա շատերին է օգնել, որ եզ, ձի ստնեն, հաղը մշակեն, անասուն պահեն, իրենց ընտանիքի ու երեխաների հոգսերը բաշեն: Կյանքի 92-ամյակում հայրս՝ Գրիգոր Մելյանը /1899-1993թթ./ իր հուշամատյաններից մեկում գրել է, որ «Լ. Կարմիրադրյուրցի Գարուստ Գեոդալյանին հողամասից, որը կից էր Բերդ գյուղի հողերին, գրկել էին գորբուս բերդցիները: Ի դեպ Գարուստը բերդցի մի ունեորի ասպոյինի զավակ էր: Դրա սպառնառով հեռացել էր գյուղից և բնակություն հաստատել հարևան գյուղում: Օրինական համարվող ժառանգները ցանկանում էին ախրել այդ հողամասին: Միայն Լևոն Բեկի և Մերոնց Շամիրի միջամտությամբ Գարուստը տեր դարձավ այդ հողամասին: Այն մինչև այժմ էլ կրում է "Գարուստի տափ" անունը:

Շատերը վկայում են, որ հայի ու բուրբի կովի ժամանակ շատերն էին նրան սրտանց Բեկ կոչում: Դրանից հետո երիտասարդները նույնիսկ ՀԱՅՐԻԿ էին անվանում: Դա զարիս էր նաև գրասրտությունից, բարի խորհրդատու լինելուց: Իսկ այն ժամանակ, երբ հիշատակվում էր նրա երեխաներ չունենալու հանգամանքը, նա պատասխանում էր. " իմ ժողովրդի երեխաները նաև իմ երեխաներն են, քանի որ, ես ինչ անում եմ նրանց համար եմ անում ":

Հաղթանդամ, բարձրահասակ ու գեղեցկադեմ տղամարդ էր նա, հարյուրավոր մարդկանց մեջ երևացող: Ականատեսները պատմում են, որ երբ նա ավելի քան 40 տարի օտար ավերում դեգերելուց հետո՝ 1962 թ. հասավ Բերդ՝ հայրենի գյուղը, առաջին իսկ պահին չար ճակատագրի կամքով դարձյալ նրան ընդառաջ եկավ մի մեծ դժբախտություն: Թիֆլիսում մահացել էր նրա եղբայրը՝ Տիգրան Բեկի որդին՝ Ներսեսը, որի անունը բազմաթիվ անգամ հիշատակվում է Բեկի օտարությունից գրված նամակներում: Իր սիրեցյալ հարազատին մշտապես փառաբարձաբեմ Զոթիկ մականունն էր տալիս: Եվ նա վերջնականապես հայրենի հողին ուր դնելով ուրախություն ու ցնծություն ապրելու վախարեն, քաղման քափորի հետ ուրով բարձրացավ Սուրբ Մարգիս

եկեղեցու գավիթ, ուր տեղի էր ունենում իր հարազատի հուղարկավորությունը: Ասենք նաև, որ Լևոն Բեկը անգամ այստեղ ՊԱԿ-ի հսկողության տակ էր...

Պայքարը շարունակվում է

Հայ- բուրբակյան կռիվներից հետո Սևբարեցի Սարոյին ու նրա նման հայրենասերներին մշտապես հուզում էր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը, միացյալ, ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության գաղափարը: Նա լի էր այդ հարցի արդարացի լուծման վճռականությամբ: Հասել էր Երևան և իր նմանների հետ միասին հեռանկարային պայքարի էր պատրաստվում: Այն է՝ անցնել Պարսկաստան և այնտեղից մտնել Թուրքիայի կողմից գրաված պատմական Հայաստանի տարածքը, որը կոչում էին ԵՐԿԻՐ և կովել այնտեղի հայության հետ միասին: Սակայն նա Երևանում հիվանդանում է և 1908 թվականին մահանում: Սարոյի Երևան զնադուց հետո Ղազախ-Շամշադյի տարածքում պրիստավ է՝ նշանակվում Լևոն Բեկը: Գավառսկի կենտրոնը նոր զարգացող Ղազախ քաղաքն էր...

Գավառսկը զանազան իրավական, պետական օրգաններ է ունեցել նաև Չազամում, Թավուզ երկաթուղային կայարանում: Այդ ամբողջ տարածքի համար պատասխանատու էր պրիստավը՝ Լևոն Բեկը: Նա հաճախ էր շրջագայում այդ տարածքում և զանազան կնճռուտ հարցեր լուծում: Նրան էին դիմում հազար ու մի խնդրանքով: Սեկին հացը չէր հերիքում, մյուսին՝ լծկանն ու կրանը, մեկ ուրիշը տուն չունէր, բայց ընտանիքով ծանրաբեռնված էր: Անխաիր, բոլորին, առանց ազգ ու դավանք հարցներու օգնում էր ինչով կարող էր.՝ Եթե կարող ես, հնար կա օգնելու, - ասում էր նա,- ինչու՞ չօգնել, բուրբը, մարկանը նույնպես մարդ են և օգնության կարիք ունեն: Ես իմ պարաքն եմ կատարում:՝ Դրա շնորհիվ էլ նա սիրելի էր նույնիսկ օտարազգի մարդկանց համար: Գուցե և այս ժողովրդականությունն վայելելու, հաշտարար լինելու համար էր, որ ցարական կառավարությունը նրան սպարզևստարում է "Ոսկե" և "Վլայիմիրի"՝ շքանմաններով, ռուսական քերթերը գրում ու տարածում են նրա անունը:՝

¹ Պրիստավ- գավառապետ: Ըստ տարեց մարդկանց դա մի անձնա դեկավար էր ամբողջ տարածքի հայ, բուրբ, մարկանք բնակավայրերի համար:

² Նայիր Ս. Լևոն Բեկ: - Ալիք /Շտուտգարդ, Գերմանիա/ 1948, N 1 էջ 17:

Ասում են, երբ նա օտարությունից եկել է հայրենի գյուղ, Թովուզ կայարանի ու նրան հարող բուրքական գյուղերից բազմաթիվ բուրքեր են եկել նրա գարուստը շնորհավորելու և ոչ դատարկ ձեռքով, այլ մեծամեծ նվերներով: Պրիստավ եղած ժամանակ, ինչպես նաև ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում օգնել է նաև բուրքերի ժառանգորդներին, ովքեր հիշել են իրեն ու ճանաչել իրենց դուստ (բարեկամ) լինելը:

Ուսանողական տարիներից նա կապված էր Թիֆլիսի, Բարվի զանձակի մեծահարուստ ընտանիքների, նրանց տղաների ու աղջիկների հետ: Սերտ կապերի մեջ էր նաև իր ազգակից արվեստագետների՝ Մկրտիչ Ավալյանի և նրա շնորհիվ նաև շատ ուրիշ արվեստագետների հետ: Հատկապես հիշատակվում է Արտեմ Աղամյանի /Ն. Կարմիրաղբյուրցի/, Եվզենյա և Սաբենիկ աղջիկների, Սերգեյ /Մարգիս/ Վարդապարյանի, Ալեքսանդր Ջաղերյանի, Ալեքսանդր Մանքաշյանի, Ներսեսյան դպրոցի ուսուցիչների և այլ մտավորականների, գրողների, պետական պաշտոնյաների հետ: Գերասան, իր բարեկամ Մկրտիչ Ավալյանի տունը իր սեփականի նման էր: Նրա Տաճատ որդին ու Անահիտը ամենօրյա ընկերներն էին: Մրանք իրենց արվեստասիրությամբ վարակել էին նաև Լևոնին: Մի բան, որ Լևոնը հեռու չէր այդ հակումից:

Մակայն կյանքի հասուն շրջանում Լևոն Բեկը և Տաճատը դարձան գաղափարական հակառակորդներ: Լևոն Բեկը ազգային անկախություն, ինքնուրույն պետականություն հաստատելու, իսկ «Տաճատը՝ համայնավարության, բոլշևիկյան: Տաճատը խորհրդային առաջին տարում արվեստի աշխատողների արհմիության նախագահն էր, որը և յժբախտաբար շատ կարճ կյանք ունեցավ:

Այսպիսով, բացի մոտ ու հարազատ բարեկամներից, Լևոն Բեկին ճանաչում, վստահում էին զանազան պաշտոնյաներ, կուսակցական գործիչներ: Անկախ, քե ինչ գաղափարներ էին հարում, նրանք նկատի ունեին Լևոն Բեկի ժողովրդավարության հանգամանքը: Երբ Եվզենյա Մելիք-Քարանթարյանը և նրա մմանները զենք էին հայթհայթում և տեղափոխում Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը զինելու, Թուրքիայի բռնությունից պաշտպանելու համար, նրանց մեծ օգնություն էր ցույց տալիս Լևոն Բեկը: Հենց իր ջանքերով էր շատ դեպքերում այդ զենքը դուրս բերում ռուսական բանակի զորամասերից և հանձնում զենքը հավաքողներին:

A II
85337



“Կովղ ծախիր, հրացան առ”

Ով եվ երբ է ասել, այս կոչը կարգախոսը, դժվար է ճշտել: Սակայն շամշադինցի տարեց մարդիկ այն վերագրում էին Լևոն Բեկին և նրա միջոցով այդ ժամանակի գյուղերի մեծերին՝ տանուտերերին: Եվ զինվելու և զենք ունենալու պահանջը միշտ էլ հնչել է այդ ժամանակներում: Իսկ ովքեր զենք գնելու, ասել է քե կով ունենալու հնար չեն ունեցել, ունեւոր ընտանիքներին ստիպում էին, որ մեկի փոխարեն երկուսը գնեն: Մեկը իր ընտանիքի չափահաս անդամի, իսկ մյուսը՝ այն աղքատ երիտասարդների համար, ովքեր զենք բռնելու, համարձկ քայլել կատարելու ընդունակություն ունեն¹: 1890-ական քվականցներից բուրբերի հայահալած քաղաքականությունը, կոտորածները այդ էր քելադրում:

1918 թվին Թուրքիան Էնվերին մեծաքանակ զորք է տալիս և ուղարկում է Արևելյան Հայաստան, աշխարհի երեսից իսպառ վերացնելու մնացած այդ չնչին հայությանը: Նա Ալեքսանդրապոլը գրավելով ցանկանում էր Ղարաբաղիսայի կողմից մտնել և կռիվը շարունակելով գրավել Գիլիջանը և շարունակել երթը ...

Անդրանիկ զորավարը իր բանակով հասնում է Գիլիջան: Իսկ Շամշադինից իրենցգորքով օգնության են հասնում Լևոն Բեկը, Շամիրը, Չլնգարանց Մուսին և այլք:

Անդրանիկը Լևոն Բեկին նամակ է տալիս և ուղարկում Ղարաբաղիսայի ճակատ՝ Էնվերի մոտ և սլահանջում, որ նա իր զորքը ետ քաշի և չհամարձակվի մտնել Գիլիջանի ձորը, այլսայես ոչ մի կենդանի բուրք դուրս չի գա այնտեղից:

Երբ Լևոն Բեկը, իր փոքրիկ խմբով, սպիտակ դրոշը պարզած հասնում է Էնվերի զորքի դիտակետին, նրա հետախուզները տեղյակ են պահում այս մասին: Թուրքը ընդունելության համաձայնություն է տալիս: Լևոն Բեկի և նրա մարդկանց աչքերը կապում են և տանում Էնվերի վրանը²: Ինչպես ընդունված էր այն ժամանակի պատերազմների

¹ Վ. Կարմիրադրյուրցի Իվան Պողոսյանը /ծնվ. 1890թ./ պատմում է, որ երբ խորհրդային կարգերը հաստատվեցին, պետականացվեցին Լևոն Բեկի, Արշակ Բեկի, Բենոյի տները: Լևոն Բեկի տունը 1931թ. դարձվել է ծխախոտի ընդունման կետ: Այստեղ պահակ էր Աղալովանց Եզոբը/Մելիքյան/, իսկ Ի. Պողոսյանը իրենց գյուղի ծխախոտի մասնագետն էր: Եզոբը մասնակցել էր 1905թ և հետագա կռիվներին և հետաքրքրական դեպքեր էր պատմում նրանց մասին:

² Սարգսյան Էդ .-Մամիկոնյան - Չիլինգարյան տոհմը:- Ե, 1998, էջ-136-138:

կանոններով: Վրանում բացում են նրանց աչքերը, փաշան նախ զարմանում ու հիանում է մի այդպիսի հսկա հասակով, բոյ ու բուռով, առնական զինվորական տեսներով և սայա զարմանում է, որ այս մարդը նման քայլի է դիմել անվարան: Առանց հաշվի առնելու, որ բուրբ զինվորները կոչնչացնեին իրենց:

- Ի՞նչն է Չեզ բերել իմ մոտ, անավոր վտանգավոր պայմաններում,- հարցնում է փաշան,- Դուք չէի՞ք հասկանում, որ զագագած բուրբ զինվորը չէր խնայի Չեզ:

-Անդրանիկ փաշան է իր նման մի փաշայի մոտ ուղարկել,- արևելցուն, հասկապես բուրբին հատուկ շողոքոքում ու սիրաշահում է Բեկը,- նա հայանել է, որ չփորձեք Գիլիզան մտնել, այլապես շտո վնաս կկրեք,- Լեան Բեկը նրան պատասխանում է հստակ բուրբերենով:

-Չեք աղաները բուրբը Չեզ նման հսկա՞ են,- հարցնում է Փաշան:

-Ինչպես տեսնում եք,- նա հատուկ զինվորներ էր վերցրել որպես իրեն քիկնապահ,- Գազախ-Շամշադիցիները լեռնականներ են, ինձնից էլ քարձր հասակով ու համարձակ:

-Դուք էլ եք Անդրանիկի նման այդ կարծիքի՞ն:

-Այո՛, առավել քան լցված ենք վճռականությամբ, քանի որ մենք մեր հայրենիքն ենք պաշտպանում: Մեզ օգնում են նաև մեր անտառները, լեռներն ու կիրճերը: Սրանք միայն մեզ են մատչելի...

Փաշան նամակը կարդալ է տալիս և կարծես քե համաձայնության նշան է անում:

Այդ ժամանակ Գազախ-Թովուզի բուրբերը սպասում էին Էնվերի առաջ շարժվելուն, որ կազմակերպեն Իշևանի, Գիլիզանի, Շամշադիի, Բարանայի հայերի ջարդը:

Այս հանգամանքը լավ էին հասկացել հայերը և ինչպես ասվեց, "Կովը ծախել էին գենը առել": Իսկ Բերդ գյուղի Դոնդադասզանց /Մարգարյանները/ զինագործ վարպետները սրեր, քրեր և այլ գեներքի հետ միասին նաև "հրանոթներ" էին սարքել: Գրանցից դրել Պառավաբարի, Ներքին Կարմիրադրյուրի, Մովսեսի, Չինարիի քարձրայի դիրքերում: Այս հրանոթների մասին շատ կատակներ ու գրույցներ են պահպանվել: Ուր նշվում են, որ քեև նրանք մեծ գործ չարեցին, քայց մեծ բոց ու ծուխ, փոշի ու դուման քարձրացրին: Թուրքերը այս տեսներով գոռում և իրար կանչում էին. -ամա՛ն Էրմանի գաղի,- ու փախուստի են դիմում:

Կռիվների ժամանակ կանայք անգամ գենը էին վերցրել բուրբերի դեմ: Հայանի է նավրեցի Թամարա /Խումար/ Մարտիրոսյանի անունը, որը գոհվել է և Հայաստանի հյուսիս-արևելյան գոբբերի հրամանատար

Սեպտեմբր, հերոսուհուն վայել քաղում է կազմակերպել Իջևանում՝ Նոյնյախի մի այլ հերոսուհու՝ սեբասթեցի Սարայի կնոջ՝ Սարայի քաղումն է կազմակերպել Բենոն 1920թ. Գլխիջանի գերեզմանոցում: Ափսոսում ես, որ շատ-շատերի, դրանց քվում նաև զինագործ Սարգսյանների մասին, յոթանասուն տարի արգելվել է խոսել և ոչ միայն խոսել, նրանց պատժել են՝ խորհրդային տարիներին արտոբերով Սիբիր:

”Հայր հայ չպետք է սպանի”

Ժողովուրդը հիանալի ասացվածք ունի. - “Բարություն արա զցիր ջուրը, եթե մարդը չհասկանա, ասաված՝ կիմանա”: Այս կարծիքը նաև Լևոն Բեկի համար է ասված: Եվ նա այսպես էլ առաջնորդվել է իր ողջ կյանքում: Ավելացնելով մի ավելի մեծ միտք. “հայր հայ չպետք է սպանի”: Թեև դաշնակցության ներքին օրենքներով ահաբեկչությունը /տեռորը/ ընդունված էր: Գա նոյնիսկ ընդունված էր այն յուրայինի նկատմամբ, որին ճանաչում էին որպես դավաճան, մատուցի: Լևոն Բեկը այս չէր ընդունում: Այդ խառը տարիներին ինչէր ասես, որ չէր կատարվի: Բուլշևիկների “Ցարատավարների ջոկի” /տերմինը իրենցն է և օգտագործել է Աղաբեկ Շահնազարյանը: Նրա հուշերի մեքենագիր մեկ օրինակը պահվում է մեր արխիվում/ հրամանատար Սարկոս Վարդազարյանը/ Վ. Կարմիրաղբյուրցի գերի է վերցվում: Լևոն Բեկի մոտ հարցաքննության ժամանակ, նա հարմար պահը սրսարով, սեղանի մյուս կողմից ասպտակում է Լևոն Բեկին: Բենոն, որ այդ պահին ներկա էր, սուրը հանում է, որ հարվածի Սարկոսին, սակայն Լևոնը ասատում է և ասում. “Եթե նա իրեն քույր տվեց ինձ վրա ձեռք բարձրացնելու, ուրեմն համարձակ մարդ է: Իսկ այսպիսիները շատ են հարկավոր հայ ժողովրդին”: Եվ կանխում է ավերորդ սպանությունը՝ հայի ձեռքով հայի արյուն քափելը: Կույ տալով ուրիշների ներկայությամբ իր ինքնասիրտությունը վիրավորելը: Սակայն կյանքում բազմաթիվ անակնկալներ, զուգադիպություններ են լինում: Ասված է. սարը սարին չի հանդիպի, բայց մարդը մարդուն կհանդիպի:

Անցնում է որոշ ժամանակ և Ա. Բերբերյանի զինվորները՝ բուլշևիկները կազմակերպեցին 1920թ. մայիսյան խռովությունը, որը Շամշադինում հաղթանակեց: Չեքրակալվեցին շատ մարդիկ: Վերին

¹ Սեպտեմբր: Հերոսուհին ընկավ: - Յոթաջ /Ե/, 1920, 7 հուլիսի N 141

Կարմիրադրյուր գյուղի քարհանքի գերեզմանոցում Ա. Բերբերյանը գնդակահարեց Կույր Աշուղին, նրան համարելով դաշնակների լուտես: Աշուղին ճանաչողները, որքան ջանացին համոզել, որ նա Նավուր գյուղացի է և, իրոք կույր է: Իր ընտանիքի ասպրատուր հոգում է աշուղի քափառական աշխատանքով:» Մարդկանց չլսեց: Մյուս կալանավորվածներին՝ Լևոն Բեկին, Արշակ Բեկին և այլոց, ոտքով տարան Գրղի: Երբ քանտարկեցին այնտեղ: Գրղի և Վ. Կարմիրադրյուր գյուղերը համայում էին իրենց հենակետերը: Ավելի բուշկիկամետ էին:

Լևոն Բեկի զինվորները իմանալով այդ մասին, հարձակվում և գրավում են այդ "բանտ" կոչվածը: Չարքում դուռը և առաջարկում, որ նրանք դուրս գան և փախչեն: Նա չի համաձայնվում: Գիմում են Արշակ Բեկին: Մա ևս չի համաձայնվում: Ասում են, թե հիմա կգան և Չեզ կկոտորեն: Չեն լսում: Մնում են անելանելի վիճակում: Լևոն Բեկն ասում է. " ով մեզ ձեռքակալել է, թող նա էլ գա մեզ ազատի: Այլապես մեր պատճառով մի քանի անմեղ տղաներ կգնդակահարվեն Բերբերյանի կողմից": Այդ դեպքի մասին իմանում է Մ. Վարդապետյանը: Նա ազատում է նրանց և իր հսկողությամբ հասցնում ուր հարկն է: Այնպես, որ նրանց կյանքին վտանգ չի սպառնում:

Կառավարական զորքերը Բեյ-Մամիկոնյանի հրամանատարությամբ կարողանում են խաղաղություն հաստատել: Այս անգամ գերի են վերցվում Գրղի գյուղացի բուշկիկներ՝ Նիկոլ Չարգաբյանը, Հովհաննես Գրիգորյանը, Խաչիկ և Աղաբեկ Շահնազարյանները և ուրիշները: Նրանց Բեյ-Մամիկոնյանի կարգադրությամբ պետք է գնդակահարեին, սակայն Լևոն Բեկը ինչ-ինչ պատճառաբանություններ գտնելով դարձյալ արգելում է: Ըստ վկայությունների Լևոն Բեկի նկատմամբ իշխանությունների վստահությունը կորչում է:

Նման դեպք է կատարվում նաև Նոր Բայազետում: Գաշնակ խմբապետները պետք է գնդակահարեին գրականագետ Համազասպ Համբարձումյանին, որի հետ էր և որդին՝ 12-ամյա Վիկտորը: Լևոն Բեկը Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներից ճանաչում էր Համազասպին: Գասընկերներ էին եղել: Նա դարձյալ թույլ չի տալիս. մենք մեր մտավորականներին ոչնչացնելով չենք կարող այլ մարդկանցով փոխարինել, - այսպիսով մեր սպազա գիտնականը և նրա աշխարհահռչակ որդին փրկվում են...

Տավուշ աշխարհի ազգային-ազատագրական պայքարի մարտիկներից մեկն էր Լևոն Բեկը: Նրան կարելի էր կոչել շամշադինցիների ֆիդայապետ: Հետաքրքրական է՝ անցյալ դարի 60-ական թվականներից արխիվներում պահպանվում են մեր գավառակի

բոլոր գյուղերի բեկերի և հոգևորականների անունները¹, որոնք օգտվել են պետական արտոնություններից: Սակայն ժողովուրդը այդ ժամանակից սկսած, բոլորից տարբերել է Լևոն Բեկին՝ Լևոն Արտեմի Մելիք-Ավալյանին, կոչելով Բեկ և ակնածանքով է հիշել նրա բարությունները իր ժողովրդի հանդեպ: Նրան համարել են ամենաարժանավոր ժողովրդաշահան առաջնորդը, ծառան՝ դառն ու լի օրերի տերը:

Թշնամու նկրտումներին ընդդեմ

Չափազանց սլամական հետաքրքրական մի դեպք, որն ընդգծում է Լևոն Բեկի հեռատես լինելու հանգամանքը: Տարեց մարդիկ պատմում էին, դա վկայում են նաև գրավոր աղբյուրները², որ մայիսյան խռովության պարտությունից հետո հայ բոլշևիկները ապաստանել են հարևան Ադրբեջանի տարածքում, Գանձակում, Բարվում: Թուրք բոլշևիկները օգտվելով այդ հանգամանքից դիմում են մի խորամանկ քայլի: Խոյրիդակցում ու համոզում են հայ բոլշևիկներին և առաջարկում Շամշադինը և նրան հարող հայկական հյուսիսային շրջանները հայտարարել խորհրդային Ադրբեջանի մասը, որպեսզի հենվելով այդտեղի ժողովրդի վրա շարունակեն պայքարը դաշնկցության դեմ, քանի որ ըստ նրանց Հայաստանը բուրժուական-կապիտալիստական երկիր էր:

Այդ ներքին սլայմանավորվածության գաղտնիքը իմացվում է և առաջինը Լևոն Բեկն է պայքարում այդ հակահայկական խարդավանքի դեմ: Միաժամանակ զգուշացնում կառավարությանը: Նախապատրաստում է ժողովրդին պատրաստ լինելու այդ ազգային դավաճանության դեմն առնելու: Այդ խելացի առաջարկությունը բոլշևիկ համարվող, բայց իսկական հավատով մուսուլաք Ն. Նարիմանովին էր: Այնուհանդերձ կարողանում են հասնել հաջողության և փրկել Հայաստան աշխարհի այդ մի հատվածը, այլապես այդ հրաշք երկրի հողատարածքը նրանք կնվաճեին և այսօր էլ վիճելի կհամարվեր: Ինչպիսին դարձան Ուտիքի շատ գավառներ, Արցախն ու Նախիջևանը: Չենք խոսում մյուս գրաված տարածքների մասին: Գե՛, արի և համոզիք նրանց ու նաև ներկա

¹ ՀՀՊՊ կենտրոնական արխիվ, ֆոնդ N 93, ցուցակ N1, գործ N 157:

² Ղազարյան Կ., Ներսիսյան Մ., առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում: /Մայիսյան ապստամբություն/: Նյութեր-փաստաթղթեր: -Ե., Պետհրատ, 1932, 457 էջ:

աշխարհի հզորներին, քե դրանք պայմանավորվածությամբ են միացվել թուրքին, որովհետև դրանք դառնում էին Խորհրդային Ռուսաստանի մի մասը, որպես փրկության ելք:

Մենք մի հռչակումում ապրիներ առաջ գրել ենք, որ երբ Շամշադինի շրջափարիտի նախագահ՝ ուն Արշակ Բիլյան համոզում էր, Նորուշենի դեկավարությանը իրենց բնակավայրը՝ Գյունաշը / այժմ Ադրբեջանի Ալիբեյլու գյուղն ու նրա աարածքը/ հանձնեն Ադրբեջանին, քայց Լևոն Բեկը միջամտում է և պահանջում, որ նորաշենցիները չհամաձայնվեն: Սակայն նախագահը Բեկին սպառնում է. "Լևոն Բեկ Չեր դաշնակցության ժամանակներն անցել են: Խորհրդային երկրում հայ ու քուրքի հարց չկա, սահման, իմ ու քո չկա, բոլորը հավասար են: Ով որտեղ կցանկանա, այնտեղ էլ բող ապրի: Մի խառնվեք Չեզ չվերաբերվող գործին":

Լևոն Բեկը ջղայնանում է և դուրս գալիս սենյակից: Այս խայտառակ գործարքը կատարվել է 1927թ.: Այս առիթով Նորաշեն գյուղից Ռուբեն Գրիգորյանը մեզ հասցեագրված մի նամակում նշում է, որ մինչև 7 տարեկան դառնալը իրենց ընտանիքը սպրում էր Գյունաշում և ունեին տուն, հող ու այգի: Երբ Գյունաշը հանձնեցին թուրքերին և նրանց հիմնական հատվածը մնաց ներկա գյուղի հանդամասը, ուր խաղողի այգիներ չեն աճում, ջրարքի տարածք չկա, նրանք նոր հասկացան, քե ինչ են կարգել: Եվ սկսեցին հարևան գյուղերից հողեր ակնկալել, ինչ-որ պահանջներ ներկայացնել: Հարևան գյուղերի տարեց բնակիչները, դրանք զիտեին այդ հայրենադավ գործարքի պատմությունը, նրանց ասում էին ու դեռ ասվում է. "Չեր հողը, դաշտերը մի փութ աղի կաշտոքով տվեցիք քուրքին: Գե հիմա գնացեք ու ետ ուզեք, եքե կարող եք": Սակայն փաստ է, որ խտրող ճանապարհով քուրքը մի քիզ հող անգամ չի զիջի:

Ի դեպ տարիներ առաջ, երբ հանդիպեցինք Շամշադինի կուսշրջկոմի նախկին առաջին քարտուղարին՝ /այժմ հանգուցյալ/ Հրանտ Ավագյանին, ասաց, որ եքե իրեն Գրդի գյուղի արտավայրերի պատճառով քուրքի դեմ ընդհարման պատճառով /1970թ./ շրջկոմի քարտուղարի պարտականություններից չազատեին, ապա ինքը պայքարելու էր նաև Գյունաշի տարածքը Շամշադինին միացնելու համար: Քանի որ հին քարտեզներում դրանք նշված են Հայաստանի մեջ: Սակայն յայտադային այդ հողերի պատճառով կռիվ ստեղծելու առիթով նրան "պատժեցին" և նշանակեցին Հայաստանի անտառային պետական կոմիտեի նախագահ: Իսկ նրա և մեր ժողովրդի այդ երազանքը նույնպես մնաց օդում կախված և չբուծվեց, անգամ Արցախյան շարժումների ժամանակ...

Պարտությունն անխուսափելի էր

Պատմական իրադարձությունների քառուղիներում չենք խորանա, քանի որ դա մեզ շատ հեռուն կտանի: Երկու և կես տարվա դաշնակցության տիրապետության տարիներին քիչ խաղաղ ամիսներ են եղել Հայաստանի Հանրապետությունում: Նախ Օսմանյու բուրքերի հարձակումները, ներքին հակամարտությունները բուլշևիկյան քարազրության դեմ, մայիսյան խռովությունը և ապա 1920թ. շարունակվող եղբայրասպան կռիվները: Մրանք մանրամասնությամբ, քստ ժամանակների արտացոլվել են Ա. Բերբերյանի¹ և այլ գրքերում ու հոդվածներում², "Յառաջ"³ և այլ պարբերականներում, պատմաբանների հետագա ուսումնասիրություններում: Այս ամենի ֆոնի վրա ցանկանում ենք ցույց տալ Տավուշ աշխարհի մեծ հայրենասերներից մեկի՝ Լևոն Բեկի կյանքից որվագներ: Մայրը, որն իր հոգում կուտակել էր մեր նախնիներից՝ Գրիգոր Մանուչարյանի, Գարեգին Մուրադյանի, Մտեփան Թումանյանի ու իր սլապերից եկած ազգային ազատագրական ոգին հոգու ընդլզումն էր ի հայտ բերել: Սակայն որքան էլ ջանային չէին կարող պայքարով պահպանել նվաճած անկախությունը: Եվ տեղի տվեցին, քանի որ ռուսական 11-րդ կարմիր բանակը լեռնային անասելի հեղեղի պես Ադրբեջանի տարածքից մտավ Հայաստան: Այդ բանակին էր միացել նաև հայ բուլշևիկների կողմից ստեղծված հեծյալ և հետիոտն գունդը:

1920թ. վերջերին Շամշադինի տարածքում կռիվներ տեղի չունեցան: 11-րդ բանակը Իջևանով իր երբը շարունակեց, բայց Շամշադին-Տավուշը ևս հայտարարվեց խորհրդային երկիր: Նոր իշխանությունները հաստատվելու ժամանակ խաստացել էին, որ գեներլ կամավոր վայր դնողների կյանքին վտանգ չի սպառնում, հատկապես նրանց, ովքեր հարևան մուսավաթների հարձակումներից պաշտպանել են Շամշադինի սահմանները: Սակայն իրենց դիպրերը հաստատելուց և ամրապնդելուց մեկ-երկու շաբաթ հետո սկսվեցին ձեռքակալությունները: Իջևան, Գիլիջան, Շամշադին, Բարսնայի տարածքներից բավականին շատ

¹ Բերբերյան Ա.-Կարմիր պարտիզանի հուշատետրից: Ե., Հայպետհրատ, 1956, 96 էջ:

² Բերբերյան Ա.- Հիշողություններ- Վերելք /Տր., 1933, N 2-3, էջ 201-215, N4 էջ 86-92, 1934, N1 էջ 70-80

³ Յառաջ- / Եր./ ,1920 - հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, նոյեմբեր ամիսների համարները և այլ պարբերականներ:

մարդիկ ձեռքակալվեցին և բանտարկվեցին Իջևանի ու Գլխիջանի բանտերում, քաց ու չորը իրար խառնելով...

Այս բռնություններին ընդդեմ Երևանի տարածքում 1921թ. փետրվարին սկսվեց զանգվածային ապստամբություն: Բոլշևիկ ղեկավարների մի զգալի մասը դարձյալ փախավ և ապաստանեց Ադրբեջանում: Իսկ ՉԵԿ-այի նախագահ Գեորգ Աբարբեկյանը հասնելով Գլխիջան, հրամայեց բոլոր բանտարկվածներին գնդակահարել:

Իջևանի բանտից 42 (մի այլ աղբյուրում նշված է 47) հոգու փետրվարի 18-ի գիշերը բանտից դուրս բերեցին և երկաթե լարերով չորս-չորս իրար կապելով մեծ ճանապարհով բշեցին դեպի հյուսիս: Մի բանի կմ. անցնելուց հետո ճանապարհից դուրս բերեցին, պատճառաբանելով, թե ռուսական զորքը մերենաներով գնում է դեպի Երևան, որպեսզի նրանց չլիանգարենք: Թալա գյուղի մոտ, մի ձորակում կանգնեցրին նախորոք փորված փոսի առաջ և սկսեցին նախ գնդակահարել և ապա սփնահարել, լցնել հորի մեջ: Պատահական ղիպվածով Հովհաննես անունով մեկը ազատվում է այդ սպանողից և ընկնելով մացառուտների մեջ փախչում: Նա հասնում է հովիվների փարախը և պատմում այդ կոտորածի մասին: Հաջորդ օրը տերերը իմանում են և գալիս են ու պահանջում ղիակները: Խոստանում են, որ կտան, քայց հասկանալով, որ դա վտանգավոր հետևանք կունենա, ռուս զինվորների սպանոնալիքների տակ հավաքվածների ցույցը ցրում են¹:

Գնդակահարվածներից հիշատակվում է Շամշադինից՝ Ներսես Ավագյանը /Հայաստանի խորհրդարանի անդամ, Գերմանիայում անտեսագիտական կրթությամբ մի մարդ/, Սերգո Քալանթարյանը, Սերգո Վարդազարյանը /Չորաբանից/, Երեմ Սարգսյանը /Բերդ/, Վահան Արզումանյանը /Թովուզ/, վաշտապետ Իվանը, Արշակ Գահրամանի Մելյանը /Վ. Կարմիրաղբյուրից/: Եվ այսպես հիշատակված են Իջևանից, Գլխիջանից 18 մարդու անուններ: Նորաշենցի Արշակ Հովհաննեսի Ավագյանը լսելով կտտարվածի մասին, մի գիշեր սայլով գալիս է Իջևան, եղբոր՝ Ներսեսի ղիակը հայրենի գյուղ տանելու համար: Սակայն արգելում են, պատճառաբանելով, թե ուշ է, ղիակների միջից ճանաչել չեք կարող² ... Մինչև 1960թ. Արշակ Մելյանի որդին՝ Մեծ հայրենականում ծանր վիրավորված Արշալույսը բողոքում էր,

¹ Ռսկեաղբյուրցի Ս. -Փետրվարյան ապստամբության զոհերը: - Հայրենիք /Բոստոն/, - 1954, N 8, էջ 87-89:

² Մելյան Բ. Ներսես Ավագյան: Մոռացված անուն: - Այգաբաց /Բերդ/, 1992 22 օգոստոսի, N 27-28:

քե իր հայրը եղել է Բարվի ցավթագործարանի բանվոր և նրան ձեռքակալել են՝ նույն անուն ազգանունը կրող, Ներսեսյան դպրոցն ավարտած, Հայաստանի խորհրդարանի անդամ Արշակ Ստեփանի Մեյանի փոխարեն: Սակայն լսողն ո՞վ էր և եթե լսել էին ի՞նչ կարող էին անել: Սրանցից ամեն մեկի մասին կարելի է ընդածակ խոսք ասել, բանի որ անհատականություններ էին և տարիներ ոչ Սերգո Վարդազարյանի, Երեն Սարգսյանի և ուրիշների մասին հուշեր են գրել "Լեռն Բեկ" գործիս ստիթով մեզ հանձնել:

Ինչ-ինչ հանգամանքներում Լեռն Բեկը այդ սպանդից ազատվում է: Սակայն ասում են, որ մինչև կյանքի վերջը խորն ափսոսանքով է հիշում այդ մարդկանց: Եվ գուցե քե "Հայրենիք"-ում հռոպածի հեղինակն ինքն է, կամ քե ինքն է հուշել այդ հռոպածը գրելու...

Ստիպված էր հեռանալ

Ժողովուրդը մեծ սեր ու հավատ ուներ դեպի Լեռն Բեկը և շատ հարցեր վճռելիս դիմում էր նրան, նրա հետ խորհրդակցում, կարծիքն իմանում: Արդեն մի օրինակ բերեցինք Գյումրաշը բուրբերին զիջելու պահից: Սակայն ոչ որ չհամարձակվեց գործկամի նախագահին հարցնելու, քե խորհրդային երկրում հայային ու սահմանային խնդիր չի լինելու, այդ ինչպե՞ս է, որ ամբողջ Կուր գետի հովիտները Կասպից ծովից մինչև Վրաստանի սահմանները, Նախիջևանն ու Ղարաբաղն էլ դրանց հետ հսկայական բերրի հողերը քիչ են, իսկ բուն տավառացի հայերին լեռներն ու ձորերը, անտառներն ու կիրճերը հասցվել, այս մի կտոր Տավառի գետահովտում գտնվող Գյումրաշը նույնպես նրանց է տրվում: Այս ու նման հարցերը ուղղվում էր միայն Լեռն Բեկին և նրանից պատասխան պահանջվում: Երբեմն մարդիկ նրա անունից էին խոսում, որպես հեղինակություն: Հեռևապես ղեկավարությունը զգում էր, որ ժողովուրդը նրա խոսքն ընդունում է, լսում ու նրա հետևից գնում: Եվ սկսում են հալածանք նրա դեմ: Բացահայտ կերպով նրան շտախ հեռու մնալու, գլուխը էտիքարով պահելու համար պետք է հեռանալ իր այնքան սիրած ու պաշտպանած Տավառ աշխարհից: Այսպես են ստաջարկում ղեկավարները, նույնն են հաստատում իր ծանոթ-բարեկամները: Արդեն իր հարազատներից՝ եղբորը, կնոջ եղբորը, արարել են առանց դատ ու դիմանի, այդպես շատերի:

Լեռն Բեկը նույնպես ստիպված էր սպրել քարնվելով՝ Թիֆլիսում,

Գանձակում, Թովուզ երկաթուղային կայարանում, և վերջապես բնակություն է հաստատում Ռուսաստանում: Ի՞նչպե՞ս հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում նա բնակություն է հաստատում Մարկոս Վարդապարյանի ընտանիքի հարևանությամբ և այդ օտար քաղաքում գաղափարական հակառակորդները դառնում են մտերիմներ: Որոշ ժամանակ հետո Մ. Վարդապարյանը վերադառնում է հայրենի գյուղ, իսկ Լևոն Բեկը շարունակում է անդաստանական կյանքով ապրել: Մի օր մի տեղ, մյուս օրը՝ մի այլ տեղ: Սակայն նրան ամենուրեք հետապնդում են: Մի անգամ Գոմի Ռուստովի երկաթուղային կայարանում, երբ տոմս էր վերցրել մի այլ վայր գնալու համար, ծանոթ մեկը նկատում է, վազում է քաղմաս և հայտնում: Ռուս չեկիտները անմիջապես մեկնում են կայարան և նրան տանում, իջեցնում նկուղային հարկ:

Բարությունը իր առաջն է գալիս

Կան մարդիկ, որոնք որքան էլ քաբարյուն են անում, չարություն են ստանում: Դա հաստատվում է նաև ժողովրդական գրուցներում և հեքիաթներում: Տարիներ առաջ մի տեղ կարդացել եմ, թե ինչպես վարպետին՝ Ավ. Իսահակյանին ստել են, գրող Անդրանիկ Հովսեփյանը իրենից ներսցած է: Վարպետը ծնուրը հենում է գավազանին և երկար-երկար ժամանակ բռնում: Չբուցակիցները անհամբեր սպասում են, թե ի՞նչ պատահեց, ինչո՞ւ չի խոսում: Վերջապես նա գլուխը վեր է բարձրացնում և զարմացած ասում. " որքան մաածում եմ ես նրան ոչ մի անգամ քարություն չեմ արել, ինչո՞ւ է նա ինձանից ներսցած..."

Բոլորը տարակուսանքով իրար երես են նայում: Ասել է, թե ուզում են ճշտեն Վարպետի ասածը.

-Միթե՞ մարդու բարությանը չարությամբ են պատասխանում:

-Այո՛, այդպես հաճախ է լինում, - պատասխանում է Վարպետը, - նայած թե ով է բարություն անողը, ինչ՞ աստղի տակ է ծնվել:

Իբր՛ք այսպես է: Տողերիս հեղինակը այն չար աստղի տակ ծնվածներից մեկն է, որը բարության դիմաց միշտ չարություն է ստացել: Ինչպես կարատասխաներ Լևոն Բեկը, եթե այսօր հնար լիներ հարցնել: Սակայն այս դաժան ճշմարտության հետ ժողովուրդը նաև մի այլ առած ունի. "Բարությանը բարություն անելը ամեն մարդու գործ է, բայց չարությանը բարություն՝ հազվադեպ՝ իզիթի": Լևոն Բեկը այն հազվադեպ երջանիկներից մեկն է, որ բազում- բազում չարությունների հանդիպելով ,

նաև եղել են մարտիկ, որոնք չեն մոռացել նրա արած բարությունը: Հավանաբար նա ևս իր քափառ կյանքում նման փիլիսոփայական խռիականությամբ է լցվել: Մի քանի օր բաղմասի նկատում անլուր մտորումներով տառապանքներ կրելուց հետո կանչում են հարցաքննության:

- Նստեցե՛ք, - ուսերեն լեզվով դիմում է քննիչը: Նրա նստելուց հետո ինքը տեղից վեր է կենում և նրա մոտով անցնելով սենյակում ճեմում, ճոճացնելով երկարաճիտ կոշիկները և խշխշացնելով կաշվե բաճկոնը: Բեկը չի նայում նրան: Գլխահակ քննիչի սեղանի դիմաց նստած սպասում էր հերքական, արդեն իրեն ծանոթ հարցերին: Նա մտածում էր, քե՛ն ինչով կվերջանա այս լուրջությունը: Բայց մի ներքին զգացում սիրտը խաղաղեցնում էր: Հանկարծ ճեմող քննիչը կանգնում է նրա դիմաց և ասում.

- Լեոն Բեկ Մելիք-Ավայան, - ավելի է մոտ կանգնում և կրկնում, - Լեոն Բեկ Մելիք-Ավայան: Մի քանի անգամ հատ-հատ շեշտելով կրկնում է. - Լեոն Բեկ Մելիք-Ավայան...

Լեոն Բեկը տարակուսում է, քանի որ շեշտադրությունը ավելի շատ հայերեն էր, քան քե՛ն ուսերեն: Հետո ինքը Ավայան է փաստաթղթերով: Այս "Մելիք"-ը որտեղի՞ց այս քննիչն իմացավ: "Էհ, ինչ կա որ, ՉԵԿԱ-ն արդեն իմ ով լինելը պարզաբանած կլինի": Այս մտորումների մեջ էր, որ հանկարծ քննիչը կանգնելով նրա դեմ հարցրեց, - Լեոն Բեկ ինձ չե՞ք ճանաչում, - այս անգամ արդեն դիմեց հայերեն լեզվով:

Միայն դրանից հետո Բեկը գլուխը բարձրացրեց և նայելով ասաց, - ո՛չ, չեմ ճանաչում:

- Լավ նայեցե՛ք, գուցե ինչ որ տեղ, ինչ որ առիթով տեսե՞լ էք :

- Ո՛չ, չեմ տեսել, չեմ հիշում: գուցե տեսել եմ Չեր ջահել ժամանակ, չէ ո՞ր երիտասարդ տարիքում մարդն այլ կերպ է լինում, որ մեծանում է, փոխվում է:

- Բե՛կ, ճիշտ ե՞ք, այդքան փոխվե՞լ եմ: Հիշո՞ւմ եք 1920թ. դեպքերը: Ես Նիկոլ Չարզարյանն եմ, անունս գուցե Չեր հիշողությունը վերականգնի:

- Այո՛, շատ լավ եմ հիշում այդ անունը, բայց այն ժամանակ Գուր շատ ջահել էիք: Ուրեմն դուք Նիկոլո՞ն եք: Այո, այսպես էլ է լինում:

- Այո Բեկ, մահվան ճիւղաններից Չեր ազատած բոլշևիկ Նիկոլն եմ՝ Գրդի գյուղից: Բեկ այս պահից Գուր ազատ էր, հիմա խոսենք Չեր հետագա անելիքների մասին, - ասելով նստեց Բեկի դիմաց: նրանք երկար գրուցեցին, հիշեցին անցած գնացած շատ դեպքեր ու մարդկանց:

Հսկող միլիցիան դուռը կիսաբաց արեց, որով ասել կուզի, քե՛ն երկար

եր խոսում, էս ի՞նչ բան է, էս ի՞նչ անեն:

-Գուր գնացեր հերքասպահություն,- քննիչը կարգադրեց միլիցիաներին:

-Այսուհանդերձ էս ի՞նչ են անելու,- քննիչին է դիմում Լևոն Բեկը:

-Միասին գնալու ենք մեր տուն: Երկու օր առաջ, երբ իմացա, որ Չեզ կալանավորել են, մտածեցի որ հարկավոր է Չեզ փրկել, այլապես կըշեն Միքիլ: Ես ինչ հնարավոր է արել եմ և Չեզ ազատել: Մեր տանը կմտածենք, քե ի՞նչ ենք անելու հետագայում,- այս ասելով կոճակը սեղմեց, ներս մտավ մեկը: Նա քոթերը տվեց նրան և ասաց,- Մենք միասին տեղ ենք գնում...

Մի քանի օր Բեկը մնում է Նիկալի տանը: Այս Նիկալը հաղորդում է, որ խոսել է մարզկոմի՝ մեր հայրենակից Գերենիկ Ապրեսյանի հետ: Քանի որ այրակոմբինատում աշխատանքները շատ վատ վիճակում են, պետք է փրկել:

-Ես համոզված եմ, նույնը Գերենիկն է մտածում, որ Գուր դա կարող էր կազմակերպել,- ասում է Նիկալը,- արդեն քոթերը կանոնավորվում են վերադասի հետ,- Բեկը քեև դժվարությամբ, բայց տալիս է համաձայնությունը,- երև Գուր հարմար էր գտնում, ինձ անելու գործ չի մնում:

Հաջորդ օրը մարզի համապատասխան պաշտոնյաները նրան ուղեկցում են և ներկայացնում արականքինատի աշխատողներին: Նա լիակատար գործի է կաշտում և կարճ ժամանակում հասնում հաջողությունների:

Ընդդեմ կոլեկտիվացման

1927 թվականից սկսած Շամշադինի գյուղերում սկսեցին համայնավարական սկզբունքներով գյուղատնտեսական արտելներ ստեղծել: Ասել է մի քանի աղբատ, չունեղ տնտեսություններ միավորվում էին և համարվում էին կաթնարտել կամ խոզաբուծական կամ այլ անասնապահական արտելներ: Մրանց պետականորեն ինչ-որ օգնություն էր արվում՝ սարքավորումներ: Յայլադներում բոլոր անասնատերերը իրենց անասունների կաթը պետք է մթերելին այդ արտելներին չնչին վարձով: Բայց շատերը հրաժարվում էին կաթը տալ լրիվ կերպով, այլ մի մասն էին տալիս: Մրանք կոլեկտիվ տնտեսությունների նախնական ձևերն էին: Մեկ երկու տարի փորձերուց

հետո տեսան, որ արդյունավետ չէ, այդ միավորված տնտեսությունները համարեցին կոլխոզներ /ռուսերեն քառով/ և քանի որ սրանք գյուղատնտեսական սարքավորումներ՝ մեքենաներ, քաշող ուժ՝ լծկաններ, ձիեր և այլ անասուններ չունեին, սպա միջակ համարված տնտեսություններին սյարտադրաբար ընդգրկեցին այդ կոլեկտիվների մեջ: Եվ այդ ադրատները աշխատեցնում էին նրանց ունեցածը: Այս ևս քիչ օգտավետ էր: Կուսակցության կողմից հրապարակվեց համատարած կոլեկտիվացում կարգախոսը: Մի քանի փորձված լրագրողներ գրեցին դրա դեմ՝ անվանելով. "համատարած" քե՞ "համըտարած" վերնագրով հռոլվածներ: Այսուհանդերձ Կենտկոմի պահանջին հաջորդեց բռնի կոլեկտիվացումը՝ ինչպես ասում էին համատարած ձևով, անխափր և որպեսզի կենսագործեն այդ բռնությունը, ունևոր համարվողներին կալակաքափա արին: Այն է ունեցվածքը բռնի միացրին հանրային տնտեսությանը, իսկ գյուղատնտեսությունից հասկացող գրագետ, աշխատասեր մարդկանց արքորեցին Միբիլ: Քանի որ մեզ համար յժվար է ստույգ նշել բերդցիների մասին, ապա մեր հայրենի՝ Վ. Կարմիրադրյուրից ունևոր, աշխատող Արշակ Առաքելյանին, Միխայիլ Մեսրոպյանին և յայրոցի վարիչ, ներսխայանավարտ, երկարամյա մանկավարժ Արշակ Ստեփանի Մեյանին արքորեցին: Որոշ ունևորների էր հեռացրին իրենց աներից, իսկ գրագետ այլ մարդիկ փախսան և պատասխարվեցին քաղաքներում: Այս միայն մեր գյուղում, մյուսներում ավելին կատարվեց: Նման վայրագությունները ուարի հանեց շատերին և ապատամբեցին: Չինված պայքար սկսեցին իշխանությունների դեմ: Դա 1930թ. հունվար-փետրվար ամիսներն էին: Ըստ մամուլում եղած հաղորդումների ըմբոստացողները ղեկավարվում էին մի կենտրոնից, որը իրեն կոչում էր "Լույս կառավարություն": Ապատամբությունը ծավալվել էր ողջ խորհրդային երկրում: Մեր շրջանում դրանց ղեկավարներից հիշվում են Քոսականց Առուշանի, Կուզինանաց Արտեմի և այսպես նաև այլ մարդկանց անուններ: Ունևորների կարող ուժերը գենը վերցնելով, գարունը բացվելուն հետ մտան անտառները, քաքնվելու և կովելու նպատակով: Կոմունիստ ղեկավարները փախսան Ադրբեջան, ապատանեցին դուստերի աներում: "Լույսի" ղեկավարները լուրեր էին տարածում, քե Լևոն Բեկը ողջ է և հիմա գործով մեզ օգնության է գալու: Քանի որ նրանց ունեցվածքը պետականացրել էին, իսկ տունը դարձրել ծխախոտի մքերման կայան: Գյուղերից մքերված ծխախոտը բերում և հանձնում էին այստեղ: Կենտրոնացումից հետո սայլերով տանում էին Թովուզ կայարան և հանձնում գործարաններին: "Լույսի" ներկայացուցիչները համոզում էին գյուղի ընդդիմադիր ուժերին, որ

ամսայաման Լևոն Բեկը օգնության է գալու: Շատերը դրան չէին հավատում: մասժում էին, որ Լևոն Բեկը վաղուց է մահացել, կամ Սիբիր է արտարվել: Բայց քանի որ մեծ հավատ ունեին Լևոն Բեկի նկատմամբ, ապա զենքը վայր չէին դնում: Թեև ապստամբների ծնողները գնում էին անուառները, գտնում նրանց և համոզում: Պատճառաբանելով, որ ովքեր կամավոր զենքը հանձնեն, նրանք հետագա պատասխանատվության չեն ենթարկվի: Նրանց հավատը կարած էր այդ խոստումներից, որովհետև շատ անգամ էին այդպես խոստացել, բայց չէին կատարել:

Կառավարությունը ստիպված նորից դիմեց բռնության: Մինչև բանակի գալը լուրեր լվեցին, որ Լևոն Բեկը երևացել է Բերդ գյուղում: Ականատեսները իրոք պատմում էին, որ նա գալիս է, հավաքում "Լույս"-ի ղեկավարներին և նրանց համոզում, որ նրանք զենքը կամավոր վայր դնելու դեպքում հետագա սյրունահեղությունից կփրկեն ժողովրդին: Ռուսական հզոր բանակի դեմ նրանք ոչինչ անել չեն կարող: Եթե մինչ այդ իրենք էլ էին հավատում այդ ստին, որ Լևոն Բեկը գորքով գալու է օգնության, ապա լրիվ քեթափ ելան... Ելիշտ է գորքը մտավ, եղան նաև զոհեր, և բանակից և քաղաքացիներից, բայց կարճ տևեց: Հատագա ապստամբությունից խուսափելու, ժողովրդի ընդդիմադիր ուժերին ամեն մի միջոցից զրկելու նպատակով, հենց այդ 1930 թվականի գարնանը բոլոր գյուղերում զանգվածաբար տաք և սառը զենքերը հավաքեցին: Նախապես հայտարարվեց, որ ովքեր կամավոր կհանձնեն, պատասխանատվությունից կազատվեն, իսկ ովքեր չեն հանձնի, բայց կհայտնաբերվեն, կարտրվեն Սիբիր: Եղան քազմաթիվ անմեղ զոհեր, բռնություններ ու նաև վա՛յ, հա՛յ համարված կոմունիստների կողմից յաշնակ համարվածների կանանց ու հարսների բռնաբարություն խայտառակ դեպքեր: Այս կատարողների սերունդները այն ժամանակ ու մինչև հիմա իրենց նախորդների կատարածի համար ամաչում են...

Լևոն Բեկը միշտ էլ եղել է շրջահայաց: Այս անգամ էլ կարողացավ ճիշտ կողմնորոշել իր հայրենակից ապստամբներին: Գուցե և նրան հենց այս նպատակով էլ Ռուսաստանից ուղարկել էին: Ռ՞վ գիտե...

Նոր պաշտոնում կամ մի նոր ողբերգություն

Անցնում է որոշ ժամանակ: Լևոն Բեկը գալիս է Նիկալի մոտ, քեև նրա հետ մշտական կապի մեջ էր, գալ ու զնալ ունեք և խնդրում է.- Նիկալ ջան դու լավ գիտես, որ ես գյուղացի մարդ եմ և այս արքաղացի փռշու, մրի,

բանվորական միջավայրում այնքան էլ ինձ հարմար չէ: Մի պայման ստեղծիր զնամ մի գյուղ, կամ սովխագ ղեկավարեմ: Այնտեղ ես ինձ շատ լավ կզգամ:

-Լևոն Բեկ, մարզի ղեկավարությունը Չեզանից շատ գոհ է, Գերենիկն էլ է հեռաքրքրվում, նրան էլ են այդպես պատասխանում: Մի առիթով Չեր աշխատանքի համար ինձ էլ են վառաբանել, քե այս Ավայանին ինչպես եմ գտել: Տարիներ շարունակ կոմքիսառի աշխատանքները ձախողվում էին: Չեր ղեկավարելու շնորհիվ վիճակը շտկվել է և այս հսկա քաղաքը այս ծանր պայմաններում կարողանում է նորմալ նախատեսելիա՞ծ հացը, այլուրը հասցնել քաղաքացիներին: Կարծում եմ, քե չեն համաձայնվելու:

-Շնորհակալ եմ այս ամենի համար, բայց շատ ծանր աշխատանք է: Գիշեր ու ցերեկ, բուն ու դադար չունեմ, գող ու ավագակներն էլ մյուս կողմից են ինձ նեղացնում: Իմ գիշերային այցելությունները չլինեն, կբալանեն, կտանեն: Այլևս ուժ չունեմ, լավ կլինի զնամ գյուղ: Այնտեղ հեշտ կլինի:

-Լևոն Բեկ, հագիվ առն ու տեղ ես դրել, հիմա էլ գյուղում պիտի չարչարվես, քանդված տնտեսությունը վերականգնես, առն սարքես:

-Չէ, գյուղում ինձ համար դրանք դժվար չեն լինի: Շատ բան ես կանեմ:

-Գե՛, որ այսբան համոզված եք, բող Չեր ասածը լինի, կխոսեմ մեր հայրենակցի՝ Ասրեսյանի հետ: Թեև համոզված չեմ, բայց կասեմ...

Որոշ ժամանակ հետո նրան ուղարկում են ղեկավարելու մի սովխագ: Կարճ ժամանակում կարողանում է ամեն ինչ անել և դուրս գալ առաջավորների շարքերը: Թվում է քե ամեն ինչ լավ է և բնականոն հունով է գնում: Նա հաճախ է տեսնվում իր հայրենակիցների՝ Նիկայի ու Գերենիկի հետ: Հանդիպում Գերենիկի մոտ ապրող նրա հորը՝ Չարսիսա քահանա Ասրեսյանին¹, որի հետ շատ բաներով կապված էր դեռ շատ վաղուց: Երբ սկսվեց 1905թ հայ-թուրքական կռիվները քահանան իր հերթին շատ օգնություններ ցույց տվեց Լևոն Բեկին հաղթանակի գարծը կազմակերպելու: Այս անգամ այցին քահանային շատ ախուր գտավ: Գիշերը տղային՝ մարզկոմի առաջին քարտուղարին տարել էին, քե ինչու², հայրը ոչինչ չգիտե: Շերունի հայրը քահանայությունից վաղուց էր հրաժարվել և հայրենի գյուղից տեղափոխվել տղայի մոտ: Այստեղ էին նաև մյուս տղաները՝ Հրանտը, Վահրամը, Ստեփանը: Ամեն մեկը նրա մեծ տղայի՝ Գերենիկի հովանավորությամբ տեղավորվել էին աշխատում և ապրում էին: Բայց, իսկ բայցերն ու անակնկալները լի են ողջ կյանքում:

¹ Մելյան Բ.- Ազգային հոգսերով տառապող հոգևորականը.- Էջմիածին, 1998, N5, էջ 120-127:

Ասում են երջանկությունը տանջանքով ու չարչարանքով, երկար սլայքարեկուց հետո է գալիս, իսկ ողբերգությունը՝ սայլը բարձած, այն էլ միանգամից: Ծերունի հայրը տագնապ էր սայրում նաև մյուս երեխաների՝ իր տղաների համար: Լևոն Բեկը, ինչպես ասում են "մատը կծում է": Գուրս է գալիս սրանց մտախցի և գնում իր վայրը: Մտածելով այնտեղ էլ հիմա բաներ կկատարվեն...

Սկսվում է 1936-37 թվականների ստալինյան բռնությունների ծանր, մղձավանջային անոթոշ կոշմարային ժամանակը: Թիֆլիսում սպանել են Հայաստանի Կուսկոմի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Լևոն Բեկը նրա ինքնասպանության վարկածին չի հավատում: Համոզված է, որ դա Բերիայի ձեռքի գործն է, Ստալինի հրամանով... Այս րուրը ծանր ազդեցություն է ունենում Լևոն Բեկի վրա: Նա, շրջահայաց մարդ լինելով հասկանում է, որ նոր, սարսափելի ողբերգություններ են սպասվում իր ժողովրդին: Ուրեմն ինքը շատ զգուշ պետք է լինի: Իսկ ազենտները ամենուրեք վխտում են՝ հայրը որդուն ուրացման շրջան է սկսվում: Կնոջը՝ Օլգային ևս զգուշացնում է, որ հարևան կանանց հետ չհանդիպի, չխոսի: Ինքը ավելի է ուժեղացնում սովխոզի աշխատանքների կազմակերպումը: "Միայն լավ առաջադոր աշխատանքը կարող է ինձ ապավեն լինել: Իմ ծանոթները չկան": Այս մտորումների մեջ էր, որ իմացավ իր շատ ծանոթ ու բարեկամ մարդկանց, նույնիսկ կուսակցական բարձր պաշտոնյաների, նվիրյալների արստրվելու մասին: Այս թվում և իր նվիրյալ Նիկոլայը և այլ նմաններ չկան: Ինքը ևս կարող է մատնության տրվել... Հոգին մի ներքին կսկիծ էր կրծում.

- Արտուշը մահացել է, եկեք քաղմանը,- փոստատարի բերած հեռագիրը գոծում է: Ահա թե ինչ անսպասելի բոթ, որի շուրջը երբեք չէր մտածել: Եղբայր՝ Տիգրան Բեկի որդին, մի հույս ու ապավեն էր իր համար, որին քարուն ու աշկար օգնել էր, որ նա Մոսկվայի համալսարանն ավարտի, իր ժառանգությանը տեր կանգնի: Նրանք էլ հայրենի գյուղից փախել և ապրում էին Թիֆլիսում: Արտուշը գերազանց ավարտելով դպրոցը, Մոսկվայում ընդունվել էր համալսարան: Արդեն ավարտել է, ու պետք է աշխատանքի նշանակվի ու դրա փոխարեն հեռագիր է ստանում: Իսկ ինքը ամեն օր սպասում էր, թե Արտուշին կդիմավորի, մի լավ քեֆ կանի ավարտելու, աշխատանքի ընդունվելու առթիվ, բայց սրանց փոխարեն այս գույժը. "-Ո՞վ է հարողում: Գուցե բշնամություն՞ն է, վրեժխնդրություն"- մտածում է նա:

-Ոչ հեռագիրը տվել է Ռոբերտ Վարդազարյանը, իր բարեկամ, մարտական ընկեր չորաբանցի Սերգեյի տղան, որը նույնպես ուսանող է:

Ուրեմն նման կեղծ կատակ չէր լինի: Նման անհանգստացնող հեռագրի չէր տա: Նա մի պահ հիշեց, որ ինքը և Արշակ Բեկը եղել են նրա փոքր եղբոր՝ Ալեքսանդրի կնքահայրը: Ուրեմն կասկածելու տեղ չի մնում: Այդ մտորումների մեջ էր, որ ստացավ երկրորդ հեռագիրը՝ Թիֆլիսից. «Արտուշը մահացել է... Գիմալոբեցեք կայաքանում ինձ հետ գնալու: Վարդուշ:» Սա եղբոր՝ Տիգրանի կինն է, Արտուշի մայրը: Թիֆլիսից գրում է հարսը: Սա Իջևանի վերին աղդանցի աղջիկ էր: Մի համեստ ու նվիրյալ մայր, որն ունեցել էր չորս երեխաներ՝ Արտուշը, Մարտյանն, Ազատը և Ներսեսը: Երեխաներ, որոնք ժառանգ չունեցող Բեկի համար հույս ու ապավեն էին, հույս ու նեցուկ, քե ու քիկունք սլետք է դառնան: Բայց այսօր նրանցից մեկը՝ չկա...

Նրան հաջողվում է կայաքանում գտնել հարսի վագոնը և հանդիպել սզակիր հարսին, մորը՝ իր պաշտելի, հարազատ երեխաների մորը, իսկ եղբայրը արստրում է: Նրանից ոչ մի լուր չունի: Այդ երկար ճանապարհին կինոժապավենի նման մտապատկերում գալիս ու գնում են իրենց անցած կյանքը: Այդ հեռագիրը նույնպես ավել է Ռոբերտը: Լեռն Բեկը նորից հիշեց նրանց ընտանիքը, հորը, մորը: Որք փոքրիկ աղայի փախուստը գյուղից Գանձակ և ինքը Տեր-Օհանյանների տոհմից լինելով չի իմանում իր ազգանունը և գրվում է պասպ Վարդազարի անունով, և դառնում դերձակի մոտ աշակերտ: Մի հրաշալի մարդ, Բալարեկ անունով, որը այս որք աղային խնամում ու սովորեցնում է իր արհեստը, հետո Թիֆլիս, տուն ու տեղ է դնում: Նրա ամուսնությունը վրաց մեծահարուստի աղջկա՝ Նինայի հետ, որի փախցնելուն աջակից է եղել նաև Բեկը: Հայքուրբական կոիվները և հատկապես Մովսես գյուղի ճակատի Սև լեռան պաշտպանությունը, որը ղեկավարում է Սերգեյ Վարդազարյանը...

Այստեղանդերձ 1921թ. փետրվարի 18-ին շամշադինցի մեծաքիվ անմեղ, հերոս աղաների հետ Գ. Աթաբեկյանի կարգադրությամբ, կոտորելը Թալա գյուղի մոտ: Նինայի՝ Սերգայի այրու աշխատանքը՝ որք մնացած երեխաներին կրթության առվ էր:

Մտածելիք ու հիշելիք շատ բաներ կան և նա մեկից անցնում է մյուսին, հորստրում հարսին, որ համբերությամբ 19վի, բայց նա շարունակում է իր ողբը... Այս դաժան ճանապարհորդությանը վերջ չկա և ահա Մոսկվայի կայաքանում դեռ գնացքը չկանգնած, պատուհանից ճանաչեց Ռոբերտին: Այդ սրացիկ բոյ ու բուսով, գեղեցիկ աղան, որը նույնպես հասակ էր առել Բեկի աչքի առաջ: Ուղեկցում է այն բնակարանը, ուր դրված էր Արտուշի դին ամփոփող դագաղը:

Պարզվում է, որ Արտուշը գերազանց ատաջաղիմությամբ ավարտել է համալսարանը և ընկերների հետ միասին ավարտական ճաշկերույթ են

կազմակերպել: Ինչ-ինչ սլառճառներով նրան քունավորել են: Մի քանի օր հիվանդանոցում տառապելուց հետո մահանում է: Այս ընթացքում նրա հավատարիմ ընկերը ու բարեկամը Ռոբերտան էր: Ոչ մի կերպ չեն կարողանում լուծել գաղտնիքը և եզրակացնում են, որ դա ՉԵԿԱ-յի ձեռքի գործն է, քանի որ նա շատ համարձակ, հանդուգն տղա էր և ուսանողական ժողովներում իշխանությունների վարած բռնությունների, սխալ քաղաքականության, Հայաստանի ծվատված տարածքների, Խանջյանի ինքնասպանությունը հերքելու և դա Բերիային վերագրելու մասին ելույթներ ունենալուն: Հետևաբար այս ձևով մարդկանց վերացնելը ավելի հարմար ձև էր¹...

Իրենց սիրելի որդու պին օտար քաղաքում հողին հանձնելուց հետո վերադառնում են տուն:

Անակնկալ հարված ևս

Գնացրն օրորվում էր ու շարժում Լևոն Բեկի հուշերը, իսկ հարսը ննջում էր դիմացը նստած: Զնա՞ծ է, քե՞ արթո՞ն: Բեկը կռահել չի կարողանում... Երկար տառապանք ու չարչարանքներ, քաղաքում քաղումը կազմակերպելու ավելորդ քաշքշուկները, իր հոգեկան ասպրամները ու հարսի մեռած, քե՞ կենդանի լինելը Բեկին քմբիլի, նիբի, անզգայության մեջ են զգում... Զնա՞ծ է, քե՞ արթոն, ինքն էլ չի հասկանում: Հանկարծ գնացքի ընթացքը դադարում է: Բեկը քմբիլից ուշքի է գալիս: Գ-ա նի սլահ է եղել... նայում է, հարսը դեմը նստած չէ: Վազոնում մարդիկ խառնվել են իրար: Հարսի կոշիկները դրված են վազոնի վտրբիկ սեղանի վրա: Մեկի մեջ բուրբ կա գրված. "Արտուշի մահից հետո իմ սպրեղը ավելորդ է: Ոչ մեկին չմեղադրեք: Վարդուշ:" Երկառողը գրել է ու վազոնի բաց սլառուհանից իրեն նետել դուրս: Վազոնի ամբողջ ժողովուրդը դուրս են քափվում: Նրանց հետ և Լևոն

¹ Ներկայացվող նկարներից մեկում մայրը՝ Վարդուշը կռացած որդու դագաղի վրա սզում է: Նրա մոտ են Լևոն Բեկը և Ռոբերտ Վարդազարյանը, իսկ հեռվում չեկիստն է, որպեսզի ուսանողները չհավաքվեն, հուզումներ ու ցույցեր չառաջանան: Նկարի բնագրերը սլահայանվում են Ռոբերտի բրոջ՝ Էմմա Վարդազարյանի տանը: Հիմա էլ Էմման / ծն. 1913թ./ կենդանի է, ապրում է Երևանում, հիանալի գրուցարար կին է և շատ հուշեր ենք գրի առել Ռ. Վարդազարյանի մասին, /տես մեր հոդվածները- Այգաբաց-/Բերդ/, 1971, 16 նոյեմբերի N135: Մանկավարժ /Երևան/, 1975, 10 նոյեմբերի, N 24:

Բեկը: Հասնում է Վարդուշին: Գեո կենդանի է, հարկավոր է փրկել: Հասնում է Պյատիգորսկի քաղաքային հիվանդանոցը: Մակայն փրկել չեն կարողանում: Գիակը տեղափոխում է այն վայրը, որտեղ հարսը ընկել է գնացքից: Հենց այստեղ, գերեզմանի փոսը փորելու ժամանակ, կիսակայարանի ժողովուրդը իմանալով այդ մասին, հավաքվում են, որոնց մեջ նաև հայեր կային: Խանգարում են Բեկին իր նպատակը իրագործել, համարելով դա խիստ սխալ և սլայմաններ են ստեղծում տեղի գերեզմանոցի հայերի շիրիմների հարևանությամբ վարդուշի դագաղը հողին հնձնելու:

Մի քանի օր այդտեղ մնալուց հետո Լևոն Բեկը Արսուշի և հարսի շորերի կասյոցը ձեռքին հասնում է Թիֆլիս:

Ասված է՝ չարիքը չարիք է ծնում: Լևոն Բեկը մի շարքավա ընթացքում անդառնալի երկու գոհ է ունենում: Նա հիշում է իր բունավորվելը Թիֆլիս-Թովուզ կայան ճանապարհին դեռ դրանից 25 տարի առաջ, սակայն ինքը կարողացավ իրեն փրկել: Եթե Արսուշն էլ այդպես զգայուն լիներ, այդպիսի մեծ ալքերգություն տեղի չէր ունենա: Մտածում էր Լևոն Բեկը, բայց այլևս ոչ էր: Հարկավոր է վերադառնալ իր բնակավայրը: Ով գիտե, թե այնտեղ ինչեր կան:

Արսուշի կորստյամբ Լևոն Բեկը շատ է ցավում, նրան համարելով ոչ միայն Տավուշցիների պարծանք, որը պետք է նա վատտակեր իր շնորհքներով, այլ և՛ հայ ժողովրդի: Մտածում էր Բեկն ու նրանց այն ժամանակակիցները, ովքեր մտախիլց ճանաչում էին Արսուշին:

Սկսվեց մեծ, աշխարհակործան արհավիրքը

Անսպասելի չէր: Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջապես իր ճիրանների մեջ էր առնում նաև Խորհրդային Միությանը: Արհավիրքը խորշարկի նման առաջ է գալիս Ուկրաինայի ու ողջ երկրի արևմտյան տարածքից: Վաանց է սպառնում ամեն ինչին: Ամբողջ Եվրոպան գրաված ֆաշիստական բանակը իր ճանապարհին խժոեղով ամեն ինչ առաջ է գալիս: Լևոն Բեկը հասկանում է, որ նրա ընթացքը առայժմ կասեցնել հնարավոր չէ: Ներկայանալով վերադասին հայտնում է, որ իր անտեսությունում պահեստավորած 40 ավանմերենա հացահատիկ կա: Ի՞նչ պետք է անել: Կարգադրում են լցնել սլարկերի մեջ և սպասել մերենաների, Ստալինգրադի արթևկոմբինատ տեղափոխելու համար: Այդպես էլ վարվում է: Վերջին մերենայի վարորդի մոտ նստած,

ամբողջ ավտոշարասյունը համապատասխան զինվորական հսկողությամբ գնում են: Ճանապարհի մի հաավածում բշնամու ինքնաթիռները գնդակոծում են: Լևոն Բեկը և վարորդը ծանր վիրավորվում են: Նրանց տեղափոխում են մոտակա բնակավայրի հիվանդանոցը: Երկար բուժումից հետո ապաքինվում է, սակայն արդեն բշնամին գրավել էր մահ այդ տարածքը: Նա փաստորեն գերության մեջ է: Բազմաթիվ արգելքներ հաղթահարելով հասնում է իր բնակավայրը: Ամեն ինչ հրդեհվել, հողին է հավասարեցվել: Իսկ կինը չկա... Սովխոզի տարածքում մնացած մի քանի ծերեր հաղորդում են, որ ֆաշիստները բոլոր կանանց ապրանքատար գնացքների վազոններն են լցրել դոները կողայել ու տարել Գերմանիա: Թե ինչ հոգեկան ապրումներ ունեցած կլինի Լևոն Բեկը, իրեն ու միայն ասածուն է հայտնի¹: Լևոն Բեկի բարեկամուհի Լուսյա Մելիքյանը 1990թ. մի նամակում մեզ գրում է. "Պատերազմի ժամանակ մորաքույր՝ Օլգա Ավայանին ևս ֆաշիստները գերի են տարել և ճամբարից-ճամբար տանջելով հասցրել Լեհաստանի Պուրավի քաղաքը, նայա Գերմանիա": Հեռագայում Բերդ հասնելով պատմել է մորաքույրը: Սա մեծ դժբախտություն էր, կարելի է ասել անդամուստի կորուստ կյանքի 7-րդ տասնամյակը ապրող Բեկի համար: Երբ այդ տարիքում աղամարդու համար միակ ապավենն ու նեցուկը մարդու հավատարիմ կլինն է: Բեկի համար առավել էր, քանի որ այդ մեծ աշխարհում բացի իր կյանքի ընկերուհուց ոչ ոք չունեի, այդ ծանր ժամանակներում, օտար շրջապատում: Նա մնում է անելանելի վիճակի մեջ:

-Ի՞նչ անել, - հարց է ծառանում նրա առջև: Ինքը ևս գերության մեջ է՝ ոչ կարող է Հայաստան գնալ, ոչ էլ Մոսկվա: Մնում է երբ գտնել: Մի քանի օր բշնամու գրաված տարածքում անորոշ, ուղորմելի վիճակում բարշ է տալիս իր գոյությունը, մշտապես որոնելով իր կնոջը:

Գրավոր աղբյուրները վկայում են, որ պատերազմի ծանր տարիներին Նժդեիը, Գրոն և նախկին այլ դաշնակցական գործիչներ այցելում էին ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներ և հանդիպումներ ունենում գերիների հետ: Գրանցում լինում էին քե՝ զինվորական, քե՝ քաղաքացիական, անել ու ջանել, կլին ու աղամարդ, մեծ ու փոքր, ճարպիկ: Նրանք անում էին ամեն հնարավոր բան, նրանց վիճակը քեթևացնելու, նրանց մահվան ճիբաններից փրկելու և ապահով վայրեր

¹ Այս մասին կլինը՝ Օլգան, իր քրոջը՝ Թագուհիին տարիներ հետո Լոս-Անջելոսից նամակով գրում է: Այդ նամակների լուսապատճենները պահպանվում են մեր արխիվում: Գրանք ավելի մատչելի դարձնելու նպատակով վերծանել ու մեքենագրել ենք : /Բ. Մելյան/:

սեղավոյներու համար: Սրանք ստեղծում են լեզիոնական հայկական ջոկատներ սլայքաքի մեջ մտնելու համար, իսկ եթե հարկ լինի, պատմական պահը օգտագործեն և տեղավոյվեն Հայաստան՝ թուրքից մեր հողը պաշտպանելու նպատակով¹: Ռոստովում և Նոր Նախիջևանում նրանց խմբին են միանում՝ Տիգրանը Բաղդասարյանը, Բենոն, Լեոն Բեկը և ուրիշներ: Լեոն Բեկը ես իր նպատակն է քերում հայավորկության շնորհակալ գործին: Նա հազար ու մի գրկանքներ կրելով գտնում է իր կնոջը ծանր հիվանդ վիճակում, մի մահվան ճամբարում: Նրա հետ էին նաև շատ այլ հայեր: Թե ինչպես, դա արդեն մասամբ հասանելի է գրավոր աղբյուրներից՝ Մ. Թառլարյանի գրքից: Մի քանի տարի տառապանքներ կրելով հասնում են Ամերիկա: Հենց այդ փաստն էլ նրան իրավունք է տվել հայրենիք վերադառնալուց հետո ասելու. "Եթե ես իմ ժողովրդի համար ոչինչ էլ արած չլինեմ, բայց որ ֆաշիստական մահվան ճամբարներից երեք հազար հայ երիտասարդներ են փրկել, հասցրել Ամերիկա, այսքանն էլ բավական է, որ ես իմ ժողովրդի առաջ իմ սլայքերը կատարած համարեմ:"

Մեր որոնումները հաստատեցին այդ փաստը, երբ 1962թ. սմռանը Լեոն Բեկը Երևանի "Արմենիա" հյուրանոցում էր, տասնյակ տղամարդիկ ու կանայք էին այցելում նրան: Ներկայացվում է մի լուսանկար, որտեղ նկարվածներից շատերը օտար մարդիկ են, որոնց հարազատներին կամ իրենց Լեոն Բեկը բարոյքյուն է արել: Տողերիս հեղինակը այդ ժամանակ աշխատում էր "Արմենիա" հյուրանոցի հարևանությամբ, քաղաքային կենտրոնական գրադարանում: Շատ վարձեցի հանդիպել, բայց չհաջողվեց: Միլիցիան նրան բացարձակ հսկում էր, նրան տեսնել ցանկացողները պետք է հատուկ թույլտվություն ունենային: Եթե Լեոն Բեկը ինչ- որ առիթով հյուրանոցից դուրս գալու լինելու ապա մարդիկ կարող էին մի քանի քառ փոխանակել: Մի անգամ ես Բերդ գյուղացի Պողոս Մանուչարյանի և այլ մարդկանց հետ սպասում էինք ստաջին հարկում՝ սպասարանից մեզ դուրս արեցին: Եվ այսպես մեզ չհաջողվեց տեսնել նրան...

Ինչ են վկայում գրավոր աղբյուրները

Մասնագիտական աշխատանքների առիթով քերքել ենք բազմաթիվ գրքեր ու պարբերականներ: Երբ հանդիպել ենք Ղազարի-Շամշադին, Տավուշ, մեր գյուղերի ու նրանց մարդկանց անուններին քարտագրել և մի հսկայական գրադարանային քարտարան է ստեղծվել հինգ տասնյակ

¹ Թառլարյան Միսաք: Օրերուս հետ: - Լոս Անջելոս, 1953, էջ 500:

տարիների ընթացքում:

Քիչ հազվադեպ ենք հանդիպել Լևոն Բեկի անվանը: Հատկապես մեզ հուզել է երկարող աշխարհամարտի շրջանը, քանի որ մեր առիճը ավել է 18 զու, իսկ գյուղը՝ 160: Ամեն անգամ սիրաս քրքոացել է, երբ կարծել ենք թե հա՛ հիմա կգանվի մի անուն... Բայց քիչ են եղել դրանք: Վերջերս հանդիպեցինք Ս. Նայիրյա "Լևոն Բեկ" հաղվածին¹, որը այստեղ նույնությամբ կներկայացնենք: Ազգային գրադարանում հասուկ արգելված ֆոնդերը 1991թ. բացվելուց հետո քերթել ենք դրանցից շատերը: Քիչ առիթներով են գրվել նրա մասին:

Սակայն Ռ. Մարտիրոսյանի գրքում² նշվում է նաև Լևոն Բեկի անունը: Նա գրում է, որ Դրոն գտնվում էր Օդեսայում, Բեկը կնոջը գտնելու և մահվան ճամբարներից փրկելու համար միանում է նրանց խմբին: Բեկի կինը Բերդ գյուղացի Դոնդադասազանց³, ասել է թե զինագործ Մարգարանների աղջիկն էր: Մյուսնք այն մարդիկ էին, որոնք մշտապես Լևոն Բեկի հետ են եղել՝ սկսած 1905 րվականից: Չենք և նույնիսկ կրանոթներ են սարքել:

Ռ. Մարտիրոսյանը մի այլ տեղ գրում էր, որ Պյատիգորսկի մերձակայքում գտնվող Նիկոլսեկա գյուղում տեղափոխված Տիգրիս, Լևոն Բեկ Ավայանի և այլոց խմբին հանձնարարված էր լրտեսական տվյալներ հայթայթել սովետական զորքերի և ռազմական կետերի մասին: Գրքում ներկայացված է ազգային լեզիոններ ստեղծելու մանրամասներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում: Նայած թե ով ինչպես կմեկնաբանի, գաղափարական ինչ լույսի տակ կներկայացնի փաստերը: Այսօրվա, մեր նյութի առումով մենք ոչ դրա հնարավորությունն ունենք, ոչ էլ դրա կարիքը: Մեր ավագ եղբայր Մովսես Մեկյանը / ծնվ. 1918թ/ 1943թ. մի նամակում Ուկրաինայի Մումի քաղաքից

¹ Նայիրի Ս. Լևոն Բեկ: - Ալիք /Շտուտգարդ/, 1948, N 1, էջ 16-20:

² Մարտիրոսյան Ռ. , Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին: -Ե, Հայաստան, 1982, -131 էջ: Լևոն Բեկի մասին էջ 87, 90, 120:

³ Դոնդադասազանց. - հրացանի փայտե մասեր սարքող, հարմարեցնող: Նրանց տոհմի՝ Մարգարանների մասին համառոտ տեղեկություններ է գրել Լևոն Բեկի կնոջ եղբայր Միխայելի տղան՝ Մերգեյ Մարգարանը /ծնվ. 1906թ./, 8.10.1998թ. Երևանում: Մերգեյը գրում է, որ իր հորեղբայր Երեմը հայտնի էր իր քաջությանը և հերոսությանը: Նա մասնակցել է նաև ներկա Գետիկի տարածքի բուրբերին այդ տարածքից հեռացնելուն: Նրան ևս գնդակահարել են 1921թ. փետրվարի 18-ին Իջևանի Թալա գյուղի մոտ: Ս. Մարգարանի ձեռագիրը պահվում է մեր արխիվում: / Բ. Մեկյան /:

/դա նրա վերջին նամակը եղավ/, զրույն է որ երեք անգամ փախել է ֆաշիստական համակենտրոնացման ճամբարից և հիմա միացած կարմիր բանակին կոչում է ֆաշիստների դեմ: Միրսա կսկծում է նրա ու մեր անհետ կորած զանգերի համար: Եվ երբ տարիներ հետո զանում ենք կորած համարվածի՝ ուրախանում ենք, ինչպես կուրախանանք մեր եղբայրների համար:

Եթե Մովեսական Մլախյանը պարավեր, ապա մի նոր մեծ եղեռն կլիներ հայ ժողովրդի արևելյան հատվածի համար: Մենք, մեր սերնդակիցները այդ համոզմանն էինք: Մենք ևս 1943-47թթ. ծառայել ենք Մովեսական բանակում: Այդ համոզումը հաղթանակ բերեց, քանզի նման հավատը նստած էր խորհրդային ժողովրդի հոգիներում: Թուրքիան ստամները սրած սպասում էր Ստալինգրադի անկմանը, որ հռչակի մեր այս փոքրիկ տարածքի հայությունը: Գ-ա կլիներ 1915թ. հայոց եղեռնի շարունակությունը:

Նրանք, ովքեր զոհվեցին թշնամու դեմ առ դեմ հանուն հայրենիքի, թող աստծո կամքով փառք ու պատիվ լինի նրանց հոգիներին... Ընթերցողիս խնդրում եմ ներող լինել մեր այս հուզական ու խոհական համոզումով Լևոն Բեկի գործի մեջ, մեր այս միջամտության համար:

Ռ. Մարտիրոսյանը շարունակում է, որ 1945թ. զարմանը Ռոստվադում հավաքված 1500 տարագիր հայեր ստեղծեցին ազգային գրասենյակ: Ուր պաշտոնի անցած Մեքո Ջալալյանը, Տիգրիսը / Տիգրան Բաղդասարյանը/, Լևոն Բեկը, Մոզիկյանը ամեն ջանք գործադրում էին խափանելու այդ և այլ ճամբարներում եղած հայերի վերադարձը հայրենիք կամ իրենց բնակության վայրը՝ Խորհրդային երկրում: Կեղծ փաստաթղթերով տեղափոխում էին Շաուտգարդ, ուր դաշնակցական գործիչները ստեղծել էին կիսառազմականացված մի ճամբար՝ լազերֆյուրերով, քանտով, 25 ոստիկանով: Ճամբարում մինչև 1949թ. հունիսը տեր ու տնօրեն էր ԿԿ ղեկավար հռչակված Մեքո Ջալալյանը: 1946թ այս ճամբարն է այցելել ԱՆՉԱ-ի՝ հիմնադիր Ջորջ Մարտիկյանը, որը դաշնակցության օգնությամբ սկսում է էժան բանվորական ուժ տեղափոխել ԱՄՆ: 1949թ. զարմանից ԱՆՉԱ-ի միջոցով Արևմտյան Գերմանիայից ԱՄՆ են տեղափոխվել ֆիզիկապես առողջ և քաղաքական վստահություն ձեռք բերած տարագիրներից մոտ 3000 հոգի: Յուրաքանչյուր մեկնադի համար ԱՆՉԱ-ի կողմից լրացվում էր հասուկ քարտ, այնտեղ նշվելով նրա

¹ Տեղահանված հայերին օգնող ամերիկայան կենտրոնական կոմիտե/անգլերեն հապավում է/: Հայերին ԱՄՆ տեղափոխելուն մասնակցել են նաև գորավար Հայկ Շեքերճյանը, գրող Վիլյամ Մարոյանը, Քալքանյանը և ուրիշներ:

ատողջական վիճակը, կուսակցական պատկանելիությունը և այլն: Շատ դեպքերում կեղծ փաստաթղթեր էին տալիս՝ սովետական ռազմագերիներին ԱՄՆ տեղափոխելու համար, որպես սփյուռքահայեր: Սակայն ոչ բոլորին էր հաջողվում մեկնել ԱՄՆ: Մի մասը իրենք էին տնօրինում իրենց ճակատագիրը՝ մեկնելով ուրիշ երկիր, օրինակ՝ Բրազիլիա՝ 100, Ֆրանսիա՝ 23, Վենեսուելա՝ 18, Լիբանան՝ 16, Իրան՝ 13 մարդ: Երբ այդ գաղութը արդեն քայքայվում էր, եղել են մահ ինքնասպանության դեպքեր: 1949թ վերջերին արդեն դադարում է Շտուտգարդի գաղութը: Սակայն այստեղ մնում են 60 հայերի զերեզմաններ:

Տասնյակ տարիներ անց, դժվար թե մեկը կարող էր սատել նրանցից մեկի, կամ մի բանիսի անունը, կամ, որտեղացի լինելը: Գուցե տողերիս հեղինակի այրումակից, ազգակիցներից էլ են եղել տեղափոխվողների կամ մահացածների ցուցակում: Այս հեռավոր օրերից թող լույս իջնի նրանց օտար ավերում, կարոտի մրմուռը սրտներում հանգչող աճյունների, շիրիմների վրա:

Այբյուրներից մեկը նշում է թե ինչու՞ հատկապես այդ քաղաքն ընտրեցին հայերին հավաքագրելու համար, որոնք Խորհրդային Միության և այլ երկրների տարածքներում ապրող, մահ զինվորականներին կուտակեցին այդտեղ: Շտուտգարդում կար այդ ժամանակ արդեն ֆաշիստների կողմից լքյալ, ամերիկյան զոնա ընկած մի ավերակ գաբանոց իր գաբանոցային շենքերով ու օժանդակ բույր հարմարություններով: Այդ ավերակները ի գարմանս քաղաքի այդ քաղամասի բնիկների, կարճ ժամանակում հայերը իրենց ջանքերով վերանորոգում են, դռներ ու պատուհաններ դնում, մաքրում հազար ու նի տեսակ աղտերություններից կանոնավոր տեսքի բերում: Գրում է այդ նամենի ականատես ու մասնակից Միսաք Թորթաբյանը իր "Օրերուս հետ"¹ հուշագրությունում: Պատերազմից հետո ԽՍՀՄ-ում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունաստանում դատական պատասխանատվության ենթարկեցին, որպես ֆաշիստական գործակալներ՝ Գ. Նժդեհին, Հ. Գևեջյանին, Հ. Միրունին, Կ. Գևորգյանին և ուրիշներին¹: 1945թ. հոկտեմբերին ամերիկյան օկուպացիոն գտում ձերբակալվեց ԳՐՈՆ: Սակայն դաշնակցական

¹ Մ. Թորթաբյանը և Ռ. Մարտիրոսյանը իրենց գրքերում այլ մեկնաբանություններ են տալիս 1-ինը՝ դաշնակցության, իսկ 2-րդ՝ Խորհրդային գաղափարախոսության տեսանկյունից: Մենք այս տանջահար պատմության հայակալ իրողությանը միայն միայն արձագանքում ենք: Ով ինչպես կցանկանա, թող այնպես էլ եզրակացնի: Մ. Բ.

գործիչների ջանքերի շնորհիվ ազատ է արձակվում, Արտաշես Արեղյանը՝ բնակություն է հաստատում Շառուգարդում:

Ընդհատեն Ռ. Մարտիրոսյանի գրքից բերվող համառոտագրությունը և ավելացնեն:

Գալիս է մի ժամանակ, որ ձերբակալում են Լևոն Բեկին, Տ. Բաղդասարյանին և էլի ուրիշներին, սախլերով որ նրանք վերադառնան իրենց հիմնական բնակավայրերը, որտեղից գերության են բշվել, սակայն նրանք հրաժարվում են: 1945թ. դաշնակցության կոաիտմները ճիշտ դուրս եկան: Նրանք, ովքեր վերադարձան ԽՍՀՄ, ասել է քե հայրենիք, ձերբակալվեցին և արստրվեցին Սիբիր: Առանց դատ ու դիվանի: Մեր հայրենի գյուղից՝ Սուրեն Գրիգորի Գլխարյանը /Պետիկանց/, Լևոն Պողոսի Առաքելյանը /Պետիկանց/ արստրը կրերուց հետո էլ չվերադարձան հայրենի գյուղ: Լևոնի կինն ու տղան շատ սպասեցին նրան: Մամիկան Համբարձումի Միրզախանյանը, որը երկար տարիներ եղել էր հայրենի գյուղի կոլտնտեսության նախագահը, 1949թ.ամռանը Յոթենկուտ կոչվող գոմահանդում սոցսարանում աշխատելու տեղից բերվեց և արստրվեց Սիբիր: Ուզում ենք ասել, որ ովքեր ինչ-ինչ պատճառներով արստրից փրկվել էին, 1949թ. մեծ արստրի տարում ենթարկվեցին այդ բռնությանը: Հիշում եմ նաև իմ հիանալի ուսուցիչ՝ Թովուզ գյուղացի Արշալույս Սաղումյանին: Նա ևս արստրից հետո չվերադարձավ հայրենիք:

ԱՄՆ և այլ երկրներ տեղավախվածները սախլված դիմեցին ծածկանվան և քարնվեցին այդպես, փրկվելով ԽՍՀՄ ՊԱԿ-ի գործակալների հետապնդումից:

Բախտ ենք ունեցել "Այգաբաց"-ում հողվածներ գրել բովուզցի Գուրգեն Հարությունյանի՝ նույն ինքը՝ Գուրգեն Ղուկասի Մուրադյանի, Այգեձորից Լևոն Մկրտչյանի՝ Լևոն Մտեփանի Բարաաշյանի /ունեցել է նաև այլ ծածկանուններ՝ Լեմ և այլն/ մասին: Լ. Մկրտչյանի հետ կարողացանք նամակագրական կապ հաստատել և մեր արխիվում սլաեպանվում են նրա նամակները:

Վերջերս Լևոն Բեկ՝ սուրբ, հայրենասեր մարդու անունով որոնումներ կատարելիս հայտնաբերեցինք Մեղևան Նայիրու անունը, որը "Լևոն Բեկ" վերնագրով հողված է գրել "Ալիք" Շառուգարդ հանդեսի, 1948թ.

¹ Մարտիրոսյան Ռ. դաշնակցակցության հակաժողովրդական գործունեությունը 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին: Ե.- 1982, էջ 120-121:

² Վերջերս պարբերականները գրեցին, որ Արտաշես Արեղյանի անձնական արխիվը բերվելով արտասահմանից, ի պահ է տրվել Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի բանգարանում:

ՈՒ-ում: Հողվածը ներկայացնում ենք առանց փոփոխության: Նա գրել է նաև "Գրիգոր Արքեպիսկոպոս Մանուչարյան" հողվածը և մինչև 1941թ. Հայաստանի կուսակցական կյանքի մասին այլ հողվածներ:

Բայց մի գրույց վկայում է, որ նա մեր շրջանի մարդ է: Հուշեր գրի առնելու առիթով եղանք Լևոն Բեկի բարեկամների տանը: Ջրուցեցինք Մերգեյ Մարգարյանի և Լևոն Բեկի քենո աղջկա՝ Անահիտ Մելիքյանի հետ: Երբ ասացի, որ մի ոմն Ս. Նայիրի Լևոն Բեկի մասին հողված է գրել, Անահիտն ասաց.

-Երբ մոտաբայրս՝ Օլգա Ավալյանը 1960թ. ԱՄՆ-ից եկավ մեր գյուղը՝ Բերդ հետը շատ խմբանկարներ՝ էր բերել և ցույց էր առնում, քե ով ով է: Երբ ասաց, որ նրանցից մեկը խմբագիր Ս. Նայիրին է: Նայելով նկարին, հիշեցի Բերդի յոթնամյակում ինձ հետ շատ լավ աղոթող, Ղրղի գյուղացի Յակոբ /Մնացական/ Մխիթարյանին: Անմիջապես մոտաքրոջս ասացի այդ, իսկ նա ասաց, քե այստեղ ինչ է եղել նրա սնունդը, չգիտի, իսկ Լուս-Անջելոսում նրան Նայիրի են ճանաչում:

Անահիտ Մելիքյանի այս գրույցը մեզ համար մի նոր անվան հայտնությունն էր: Նրա ասածը համոզիչ էր: Լևոն Բեկի կնոջ հոգեհանգստի արարողության նկարների տակ կար Լևոն Բեկի մակագրությունը, որը կատարվել է Լուս Անջելոսի Սուրբ Խաչ եկեղեցում: Մի նկարի տակ Բեկը գրել է. "Կանգնած է պարոն Ն.-ն, որն իր ելույթով խորը ցավակցություն է յայտնում տարաբախտ տիկին Օլինգա Ավալյանի կորստի համար", ժամանակը նկարի տակ նշված չէ: Երբ մի խումբ նկարների հետ աիկին Անահիտ Մելիքյանը տեսավ այս նկարը, առանց վարանելու ասաց.

-Ա՛յ, սա է իմ ընկերը՝ Յակոբ Մխիթարյանը, որին Բեկը Նայիրի է անվանել: Այսբան փաստարկներ ունենալուց հետո դարձյալ քողում ենք կասկածելի...

Ովքեր կարող են, բող սովելի ստույգ ասեն...

¹ Մեզ չի հաջողվել հայտնաբերել այդ նկարը: Գուցե Օլգայի մահից հետո նրա հարազատները ՊԱԿ-ի հետապնդումից փրանգ զգալով ոչնչացրել են այն: Գուցե՞ մի տեղ պահպանվում է և կհայտնաբերվի: /Մ. Բ./: Ընթերցի Ավալյանը հետաքրքրական դեպք է հուշագրում հետապնդումից:

Ի՞նչ եղավ հետո, կամ ինչպես տնօրինեց ճակատագիրը

Անաստված տեղ կապովի,
Անաբխա՛ տեղ չի ապովի...
/'Պասյիս' Վարդևանի խոսքերից/:

Մտալինի մահից հետո Խորհրդային Միությունում որոշ չափով քեթևացավ ՊԱԿ-ի ներգործությունը: Մարդիկ սկսեցին բարձրաձայն խոսել, իսկ Կոմկուսի 20-րդ համագումարը /1956թ. ամսոտ/ լրիվ փետրահան արեց Մտալինի և նրա կլիկի պաշտամունքը: Թեև դա համաշխարհային մարդակի բննադատության՝ քեր և դեմ խոսակցությունների տեղիք տվեց, սակայն հնարավոր եղավ ճեղքել "երկաթե վարագույրը"՝ ԽՍՀՄ-ի փակ սահմանները և մարդկանց՝ գիտնականների փոխադարձ այցելություններ ԽՍՀՄ և այլ երկրներ:

Մի խոշոր համաշխարհային գիտական ժողովի ԽՍՀՄ պատգամավորության հետ ԱՄՆ է մեկնում նաև աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը: Այդ իմանարով Լևոն Բեկը հնարավորություն է ստեղծում և հանդիպում նրա հետ: Բեկը խնդրում է նրանից, որպեսզի միջամտի կառավարություններին իր և կնոջ հայրենիք այցելելու համար: Վ. Համբարձումյանը խոստանում է և 1960թ. Լևոն Բեկի կինը՝ Օլգան գալիս է Երևան, ապա թույլ են տալիս լինել ծննդավայրում՝ Տավուշի Բերդ գյուղում: Նրանց այցելում են շատ-շատերը, նայում են քերած նկարները և նրանց մեջ ճանաչում իրենց կորած հարազատներին: Ինքն է այցելում հարազատներին և բարեկամներին, իրենց կառուցած տան մոտ կանգնում է երկա՛ր նայում և այդ պահին ուշաքափի վայր է ընկնում... Գրանից հետո վատանում է: Բժիշկները չեն կարողանում լրիվ ապաքինել նրան: Որոշ ժամանակ հիվանդ մնալուց հետո մահանում է իր եղբոր՝ Արտեմ Պետրոսի Մարգույանի տանը: Նրան հուղարկավորում են իր հայրական հարազատների՝ Դոնդադասզանց՝ Մարգույանների գերեզմանոցում, Բերդ գյուղի ս. Մարգիս եկեղեցու մոտի գերեզմանոցում: Այսպիսով, ժամանակը լրանալուց հետո, որ նա պետք է վերադառնար Ամերիկա, դրա փոխարեն ծուլվում է հայրենի հողին: Մի երագանք, որ կատարվում

¹ Արխա-Հենարան, դժվար վիճակից դուրս գալու հարմարանք, հնարք:

է աստժոն կամբով, քանզի այս մասին նա գրել էր իր նամակում:

Լեոն Բեկը լսելով կնոջ մահվան լուրը, Լոս Անջելեսի Ս. Խաչ հայկական եկեղեցում կատարում է նրա հոգեհանգստի արարողությունը և տալիս հոգեհաց: Գրան մասնակցում են բազմաթիվ ամերիկահայեր, իր հայրենակիցները, մարտական և ճամբարային տառապյալ ընկերները: Հոգեհացի ժամանակ հարգանքի ու մեծարանքի ճառեր են ասում: Այս առիթով արված նկարներից մի քանիսը Լեոն Բեկի մակագրությամբ հայտնաբերվել է իր եղբայր՝ Տիգրան Բեկի աղջիկ՝ Մարուսյայի բռնների տանը՝ Երևանում¹: Մարուսյան այն հարազատն էր, ում Լեոն Բեկը վստահել էր իր սուրն ու ատրճանակի արծաթե պստոյանը Երևանի պետական քանգարանին հանձնելու համար: Այն պահպանվում է և գրանցված է 79-24 համարի տակ: Այդ նկարներից մի քանիսը մակագրությամբ ներկայացվում է վերջում: Հաջորդ տարի հայրենիք է վերադառնում նաև Լեոն Բեկը, կնոջ գերեզմանին այցի: Նրան ուղեկցողները պատմում են, որ Բեկը մի երազանք ուներ: Մուրդուզի ժայռերից մեկում, մի ապահով տեղ զենք ու զինի էր պահել: Ցանկանում էր զնալ և հանել, սակայն դիրքի բարձրության, լեռնային ճանապարհի դժվարությունը չի կարողանում հաղթահարել և ճանապարհի կեսին ստիպված նստում է: Առողջական վիճակը վատանում է: Մի կերպ վերադառնում է Երևան, հույս ունենալով թե կհասնի Լոս Անջելոս իր ինչքին տեր կկանգնի, սակայն Երևանում, իր քրոջ աղայի տանը՝ Չինչին գյուղացի, բժիշկ Վանիկ Գարբիելյանի տանը կնքում է իր մահկանացուն: Բժիշկի և իր հարազատների ջանքերը զուր են անցնում՝ փրկել չի հաջողվում: Գիսկը տեղափոխում են Բերդ քաղաք և իր մյուս քրոջ բռան՝ Արծրուն Աղամյանի տանից հողարկավորում են՝ կնոջ շիրմի կողքին: Մեզ չի հաջողվել իմանալ նրա և կնոջ մահվան ստույգ ամսաթիվը: Այդ մեծ հայասերը ու հայրենասերը մահանում է տասնյակ տարիներ հետո, տունդարձի ճանապարհին... 1962 թվականին: Թե՛ կնոջ և թե՛ Լեոն Բեկի մահվան հետ կապված զանազան ժողովրդական խոսք ու գրույցներ եղան: Ասում են, թե Ամերիկայից ճանապարհելիս, դանդաղ ներգաղթող բույն են ներարկել, որի պատճառով էլ ամիսներ հետո նրանք մահացել են:

Նրանց հարազատները և բժիշկները նման վարկածը անհիմն են համարում, ասելով, թե դա ժողովրդի ցավ ու կակիծի երևակայական

¹ Ըստ Լոս Անջելոսի Մուրք Խաչ եկեղեցում 1960թ. հոկտեմբերի 2-ի Լեոն Բեկի կողմից կնոջ մահվան քառասունքի առթիվ կազմակերպած հոգեհանգստի, նա մահացել է օգոստոսի 23-ին: Հոգեհանգստի հրավերի օրինակից կա մեր արխիվում: /Մ. Բ./

հետևանք է: Իսկ ի՞նչ եղան կնոջ բերած նկարները: Ոչ մեկը չի կարողանում տեղեկություն հաղորդել: Այս առումով հետաքրքրական է նրա քենի՝ Թագուհիքի աղջկա՝ Ռոզա Հայրապետյանի խոսքը: Այնքա 3 սահն ու վախը հարազատների ու շրջապատող մարդկանց վրա ուժեղ է եղել, որ նույնիսկ վերադարձից հետո չէին այցելում նրանց տեսակցության: Ռոզան սլամեց, որ 1937թ. իրեն կոմսոմոլի շարքերից հեռացրել են այն պատճառով, որ ինքը Լևոն Բեկի կնոջ քրոջ աղջիկն էր: Երկարամյա լրագրող, մեր հայրենակից Էդուարդ Շահիրյանը մասնակցել է կուսակցական մի քարձր կարգի ժողովի, ուր մեր հայրենակից Մտեփան Լևոնի Թումանյանին քննադատում էին, քե նա Լևոն Բեկի քարեկամն է: Իսկ այդ ժամանակ նա արդեն իր աշխատանքով նվաճել էր սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Ի՞նչ կարող էիր անել: Այդպես էր կամոնիստների դրվածքը:

Այսուհանդերձ, երկարամյա տառապալից աղիսական կյանքով ապրելուց հետո նա այն երջանիկ մարդկանցից մեկն էր, որ գերեզման ունեցավ հայրենի եզերքում: Եվ ցանկացողը կարող է այցելել, խոնկ ծխել և մոմ վառել այդ սուրբ շիրիմի առաջ: Նրա շիրմաքարի համառոտ տեղեկությունները շատ բան չեն ասում, քայց հիշեցնում են.

Լևոն Բեկ

Լևոն Արտեմի Ավայան

1879-1962թթ.

Օլգա Պետրոսի Ավայան

1884-1960թթ.

Գերեզմանի հարևանությամբ քաղված են նաև Լևոն Բեկի կնոջ եղբայրը և կինը՝

Արտեմ Պետրոսի Սարգսյան

1886-1961թթ.

Սիրանուշ Ֆրիդրիխի Սարգսյան

1901-1980թթ.

Շիրմաքարի արձանագրությունների աջ և ձախ կողմերում դրված են հանգուցյալների լուսանկարները: Հուշաքարերը մոտ 2 մետր քարձրությամբ, սև մարմարե հղկված քարեր են, առնված երկաթե ցանկասպառի մեջ: Տես նկարում...

* * *

Այս գերեզմանոցում են բաղված և տողերիս հեղինակի նախասպասեր՝ 1820-1830թթ. կռիվներում զոհված ու մահացածների գերեզմանները: Որոնք ևս կռվել են Տավուշ աշխարհի փրկության համար: Այստեղ բաղվեց մեր օրերի հերոսներից ևս մեկը՝ Արթուր Աղվանի Մեկանը ծնվ. 1957թ., զոհվեց այն նույն Սև լեռան ճակատում՝ Մովսես գյուղի մոտ, 1996թ. օգոստոսի 16-ին: Այդպես է, կյանքը շարունակվում է...

Արթուրի հուղարկավորության ժամանակ այցելեցինք նաև Լևոն Բեկի շիրիմին: Նա իր նման տառապանքի ենթարկված հազարներից մեկն էր, որ իր սրած բարոյքամբ սուրբ մասունք դարձավ հայրենի հողի գրկում, որպեսզի մեր նման հետաքրքրվողները աեսնեն ու իրենց հոգում կենդանացնեն նրա կերպարը: Նրա անցած կյանքի նյխասկանը...

Միևեկի ընթերցող կարդա շիրմաքարի վրա գրված արձանագրությունը և եթե հայրենասիրության կրակ կա քո հոգում օղորմի ասա ու փսոթ սուր նրան: Նրա անուճով ու նաև այդպիսի հազարավորների, որոնք չարժանացան այս մի կտոր սուրբ հայրենի հողին, որ ասեն հողը քեթև լինի նրանց վրա: Ու բող իսկապես քեթև լինի... Մենք էլ մխիթարվենք, որ տեսանք նրանց ու հաղորդակցվեցինք նրանց անմահ հոգու հետ: Ու բող քեթե՛ն նրանց անմահ հոգիները մեր զեղահրաշք Տավուշ աշխարհի երկնակամայում, որ երբեք օտարի, բռնակալ օտար ոտք չտարի մեր սուրբ հողը, նրանց սուրբ շիրիմները:

Լևոն Բեկի անցած կյանքով մենք հասկանում ենք, որ որքան էլ սլատմությունը, ժամանակները լինեն դաժան, միևնույն է մի օր ճշմարտությունը լույս աշխարհ կգա...

* * *

1990 թվականին գրածս "Լևոն Բեկ" հոդվածում կարծիք ենք հայտնել, որ հարկավոր է Բերդ քաղաքում մի փոքրց կոչել նրա անուճով: Դա կատարարվել է՝: Կարելի է նաև արձան կանգնեցնել Բերդի կենտրոնական հրասպարակում:

Բեկը իր սուրբ հազար ու մի փորձության ենթարկելով հասցրել է հայրենիք: Սուրբ և ատարճանակի արծաթյա սլատյանը հանձնելով իր

¹ Ավանային խորհրդում: - Այգարաց (Բերդ), 1992, 4-ը հուլիսի, N 21:

եղբոր աղջկան՝ Մարուսյային, խնդրել է հանձնել Երևանի պետական
պատմական քանդաքանին: Այն գրանցված է 79-24 համարի տակ:
Միքելի հայրենակից, եթե երբևէ լինես այդ քանդաքանում, բազմաթիվ
ցուցանմուշների հետ միասին պահանջիր, որպեսզի ցույց տան մահ Լևոն
Բեկին պատկանող իրերը՝ հատկապես սուրը, որ միշտ հատու է եղել
ընդդեմ քշնամու, որպեսզի նա չմտնի մեր հայրենիքի սուրբ հողը: Սրանով
մեծարած կլինենք մահ նրա անմահ անունը:

Հարկավոր է Բերդի գավառագիտական քանդաքանում ստեղծել
Լևոն Բեկի և նրա նմանների ցուցավահանակներ: Դա նրանց համար
ժամանակավրեպ է, այլ ապրողների համար է պետք: Նման դեպքերում
չպետք է գրաբնութայան ենթարկել, քե նա ո՞վ է, ի՞նչ կուսակցության էր
պատկանում: Յուրաքանչյուրի համար իր անցավորը սուրբ է ու քանկ:
Թող նրանք լավն ու վատը իրենք գնահատեն: Այս է ազատ, անկախ,
ինքնավար ժողովրդավարությունը: Դեռ անհայտ է, քե դարավոր
սրայքարի բառողիներում ինչեր է՝ սպասվում մեր աշխարհին ու
մարդկանց: Թող նրանց ոգին մշտապես պահասարան լինի մեզ: Ամեն...

Բարսեղ Մելյան, 6 փետրվարի 1999թ. Երևան:

ԼԵՎՈՆ ԲԵԿ*

/Ծննդյան 65-րդ տարվա առթիվ/

Լևոն Բեկը ծնվել է Շամշադինի Բերդ գյուղում: Այդ գյուղը իր անունն առնում է Տավուշ գետակի վրա կառուցված բացառիկ պատմական նշանակություն ունեցող բերդից, որի կառուցումը վերագրվում է 10-11-րդ դարերին:

Լևոն Բեկն իր առնական, գեղադեմ արտաքինով հիշեցնում է իր ծննդավայրի շքեղությունը: Նրա խորաբառիանց հոգու պարզությունը հպարտ Մուրդուզից սկիզբ առնող Տավուշ, Ախնջի և Հասսանու գետակների պարզությունն ունի:

Ընդհանրապես խոսել Լևոն Բեկի մասին նշանակում է գործ ունենալ լայն ժողովրդականություն վայելող, քաղաքականությունը հասկացող և միջին սրբակ ունեցող մի քաջ զինվորականի հետ:

Մի անձ, որը անխուճ կերպով երկար ու ձիգ աարիներ հանուն ժողովրդի շահերի մարտնչել է Ղազախ-Շամշադինի հովասուն լեռնադաշտերում և հատկապես Շամշադինի չքնադագեղ, լուրջ սարերում:

Նրա զինվորական-քաղաքական գործունեությունը սկիզբ առնելով 1905թվականից իր կատարելությանը հասավ Հայաստանի Հանրապետության շրջանում: Եվ նա ամենայն իրավմամբ այդ հանրապետության պատմության փառավոր էջերում իր համեստ տեղը գրավելու իրավունք ունի:

* Հարգելի ընթերցող - եթե Դուք անձամբ ծանոթ չեք Լևոն Բեկի վսեմափայլ բնավորության հետ, խնդրում եմ ինձ չայայանել կեղծավորության մեջ, եթե ստիպված եմ այդ առնչությամբ իրականությունը հայտնելու: Ես դիմեցի բոլոր հնարավոր միջոցներին, քայց ինձ չհաջողվեց ստանալ հորեյանի անցկացման վերաբերյալ իր համաձայնությունը: Այդ իսկ պատճառով որոշեցի ինքնակամ կերպով ձեռնամուխ լինել այս ամենահամառոտ հոդվածի գրությանը:

Մի գրություն, որը հավակնություն չունի ոչ միայն Լևոն Բեկի կյանքն ու գործունեությունը լիովի նկարագրելու, այլև ուրվագծեր լինելու: Բայց և այնպես համոզված եմ, որ վերավորած պիտի լինեն Լևոն Բեկի բնածին համեստությունը: Փույթ չէ, բող հողորանքի փոխարեն նրա մեղադրանքին արժանանամ, միայն թե ճշմարտության մասը գոնե ազատված լինի կաշկանդումներից¹:

Լևոն Բեկը երիտասարդական տոկոնությամբ, ուս կառավարության ձեռքով պատրաստված, հայ-թուրքական կոտորածների պահին, Սարսի /Սևբարեցի/ սպանվելուց հետո իր վրա է վերցնում Ղազախ-Շամշադինի պաշտպանությունը:

Եվ նա 1905-1917թթ. Շամշադինում, Իջևանում, Ղազախում կատարում է քարգնացի, ոստիկանապետի, հրամանատարի և զանազան նպատակներ հետապնդող արտակարգ լիազորի պաշտոններ: Ընդհիվ տեղական քեթուրք և քեթուրք հայ զանգվածների մեջ վայելած հարգանքի, նրա խոսքը ընդունելի էր: Մի կողմից կոմուն էր ճակատում քուրքերի դեմ, իսկ մյուս կողմից նրա տունը հաճախող հյուրերի կեսը քուրքեր էին: Ահա քեթուրք է նշանակում ժողովրդական մարդ լինել:

Այդ ժամանակամիջոցում կատարած նրա խիզախությունները արժանացան զովասանքների, գրվեց պետերբուրգյան մայրաքաղաքային քերթերում և նույնիսկ պատկերվեց "Ռսկե" ու "Վլադիմիրի" շքանշաններով:

Պայթեց ուսական մեծ հեղափոխությունը: Սկսվեց ուս գործերի նահանջող ժխտը: Հասել էր այն օրհասական ժամը, երբ հայ ժողովուրդը մենակ պետք է գոյամարտեր ամեն կողմից հարձակվող թշնամիների դեմ: Այսպիսով սկիզբ առավ հայ կամավորական զանգվածային շարժումը:

Այդ բախտոլոր ժամերին, Լևոն Բեկը լեռնցու աշխուժությամբ անբացնելով Ղազախ-Շամշադինի տեղական պաշտպանությունը, կամավորական մեծ խմբով ճանապարհվեց գորավար Նազարբեկյանին օգնելու: Աճող վտանգներին գուզրնթաց նա եղավ Ալեքսանդրապոլում, Արփաչայի ավերին, Մեպուեի մեա /Գլիջան/ և առանձնապես նշանավոր դեր խաղաց հայ-վրացական պատերազմում՝ գորավար Գրոյի մոտ:

Ավելի ուշ, 1920 թվին կլանող բոլշևիզմը սկսեց ծեծել Հայաստանի դուռերը: Բերբերյանը համայնավարին հատուկ կեղծ խոսքերով նախապատրաստվում էր Ղազախ-Շամշադինը դարձնելու Հայաստանի խորհրդայնացման առաջին կամուրջը:

Ի պատասխան բոլշևիզմին, սպայակույտի կապիտան Լևոն Բեկը իր նախաձեռնությամբ արագացրեց ու ամրապնդեց Ղազախ-Շամշադինի պաշտպանությունը: Այսինքն՝ գումարեց նույն շքանշանների զինվորական խմբապետերի ժողով, բացառելեց գործի էությունը, տվեց յուրաքանչյուրին

¹ Նաիրի Սիդևան- Լևոն Բեկ-Ալիք /Շտուտգարդ/, 1948, N1, էջ 16-20:

Ծանոթություն - Աշխատել ենք նույնությամբ արտագրել վերը նշված հանդեսից, սակայն փոխել ենք հին դասական ուղղագրությունը և գրել խորհրդային տարիներին արևելահայ ուղղագրությամբ: Ասել է քերթաց վանկի 3-ն չենք գրել, կամ բառակզբի 3-ն գրել ենք չ: / Բալբեկ Մելյան - 6.01.99թ/:

գործերու ծրագիր, այլև այլ ճանապարհներով հայթայթեց լրացուցիչ զինամթերքներ, կանոնավարեց պաշտպանության գծերը, աշխտժայրեց գյուղերի կապը, առաջարկեց Բերքերյանին հեռանալ, բանտարկելով Երևան ոստիկանի բշնամու լրտես-գործակալներին ու հայտնեց Երևանի կառավարությանը սպառնացող վտանգի մեծությունը:

Վերջապես համայնավարների հետ բռնկվեց անհավասար ուժերի կռիվը: Լևոն Բեկը գնդակի արագությամբ շրջում էր պաշտպանության հանգույցակետերը: Եվ մի քանի ամիս շարունակվող թռի ու բռնում բռնկիկները գրավելով սրազ գյուղեր, դարձյալ ստիպված եղան ետ նահանջելու: Այդ վճռական դեպքերի պահին Գաշնակցական կառավարությունը չբավարարվեց Ներքին գործերի նախարար Մանասյանին Դիլիջան ուղարկելով, այլև շտապօգնության օգնության հասավ Բեկ Մամիկոնյանին: Նա Լևոն Բեկին տեսներն պես ասաց . “Զո ցուցաբերած մարտասիրության համար, շքանշանի վախարեն թող քեզ համբուրեն”:

Լևոն Բեկը չհագեցնարով Շամշադինի հաջողություններով, օգնության է հասնում Գարադայրյալին: Նույն պահին գնդապետ Բաղդասարյանը /Տիգրիս/ կռվում էր այնտեղ: Կողմերի միասնական ուժերով Գարադայրյան ևս մարտվեց բշնամու ազդեցությունից: Բայց և այնպես կանխարաշված դեպքերն աստիճանաբար հասնում են իրենց ճակատագրական վախճանին: Իրերի բերումով հաջողությունները ժամանակավոր էին թվում: Գնարով գիրանում էր բռնկիզմը և նրան նորանոր քաղցր պատուներ էին հարկավոր: Այլ կերպ ասած Հայաստանի խորհրդայնացման օրերը մոտենում էին:

Խորհրդային իշխանության մոտքը Շամշադինում առանձնապես շատ ծանր հետևանքներ բաղեց Լևոն Բեկի ծնված գյուղում: Բռնկիկները հսկահեղափոխական գյուղ համարելով, անխնա վրեժխնդիր եղան նրան կատամար: Այդ վրեժխնդրությունը ավելի կրկնապատկվեց, երբ համատարած հավաքական անտեսությունների կազմակերպման բռնի քաղաքականությամբ 1930թվին բռնկիկները դեմ առան գյուղացիական զինված ապստամբություններին:

Այդ ապստամբությունների եռուգեռի օրերին էր, որ Շամշադինի բոլոր գյուղերում, այն էլ կայծակի արագությամբ, լուր տարածվեց, թե “Մեծ գործատավ մեզ օգնության է գալիս մեր հարազատ Շամշադինի Անդրանիկը՝ Լևոն Բեկը”:

Կատարյալ մի հրաշք էր: Մինչ այդ մահացած համարվող Լևոն Բեկը հարություն էր առել և ապստամբ ժողովրդի, կամ այսպես կոչված “Լույս կառավարության” ոգեշնչողն ու դրաշն էր դարձել:

Ապստամբությունը ճնշելուց հետո դարձյալ անմտություն համարվեց

նրա կենդանությունը: Այդ դեպքերից ավելի տաքացած համայնավարները Շամշադինում Լևոն Բեկի անունը կրող սար ու ձորին ուրիշ անուններ տալով, ճիգ ու ջանք էին գործադրում ժողովրդի հասկացությունից անհետացնելու նրան կյանք տվող լեզենդներն ու անունները*: Նույն նպատակն էր հետապնդում նաև Խորհրդային Հայաստանի կառավարության անդամ ու ժողովրդական երգեր ստեղծագործող հանրածանոթ աշուղ Գրիգորը, որն իր արհեստական գայրույթի բովանդակ բույնը հաճախ թափում էր Լևոն Բեկի հասցեին: Մեղադրելով Ղազախ-Շամշադինի կապակցությամբ, համանուն շրջանների գյուղերում երգում էր.

*“ Մեր անցյալի բոլորի մեղավորն է,
Շամշադինի բեղավորն է”:*

Իգուր էին համայնավարների անիմաստ փորձերը, քանի որ Լևոն Բեկն իր հայրենասիրությամբ, հերոսությամբ, մարդասիրությամբ ու անահման առատաձեռնությամբ անջնջելի անուն քողեց Ղազախ-Շամշադինի պատմության էջերում: Նա իր ունեցած շատ զծերով հիշեցնում է շամշադինցի վաղեմի պատմական հերոս, արքեպիսկոպոս Գրիգոր Մանուչարյանին:

Լևոն Բեկը այսօր 65 տարեկան հասակում դեռ երկաթյա առողջություն ունի: Նա մեր երիտասարդության ամենամոտ բարեկամն է և բարի խորհրդատուն: Առողջություն և երկար կյանք Շամշադինի Անդրանիկին¹:

* Առաջին անգամ 1943 թվին Բեռլինում ես լսեցի Լևոն Բեկի կենդանության լուրը: Ես չէի կարողանում հավատալ, որ նա կարող էր կենդանի լինել: Նա ինձ համար վաղուց էր գերեզմանի արժանացել: Իմ գործնական հանդիպումներով /Շտուտգարդ-1947թ./ ոչ միայն կասկածանք էի տածում նրա իսկության վրա, այլև իմ պատկերացրած առյուծին տեսա վանդակի մեջ: Այժմ հավատում եմ, որ նա Լևոն Բեկն է, իսկ վանդակը՝ դժնի միջավայրը:

¹ Նայիրի Ս: Լևոն Բեկ:- Ալիք /Շտուտգարդ/ -1948, N 1 էջ 16-20, նկարը:

Ա Կ Բ Ո Ս Տ Ի Ք Ո Ս

/նվիրված է իր ծննդյան 65 ամյակին/

Լացակումամ հայրենիքիդ վշտի ծանր օրերին
Եռանդագին ու ժյարեն քեզ հանձնել ես մարտերին,
Վիշապածև ոհմակների տենչանքները զավթարար,
Ոգեշնչված մարտիկներով ջլատել ես քաջարար:

Նեղուրյունը միշտ փոխել ես վտանգագերծ վիճակի:
Բարեգուշակ լուր ես եղել քո ջանքերով եզակի,
Էլբրուսի սլես ճերմակավարս, Մասիսի սլես ՀԱՅ աստված՝
Կյանքդ կովի ու մարտերի կնիքներով է գուզված:

Միքաժները չեն սասանել կամքիդ նավը անառիկ՝
Եղել ես դու ըմբոստության մի մարմնացում բացառիկ:
Լիանայս էր Շամշադինը, որի ծոցից դու ելար,
Ինչպես սլաշտսլան, նրա համար մարտեցիր միալար:

Քեզ ժողովուրդդ ճանաչեց, ով ձիավոր սրընթաց՝
Երազանքով սլանդուխտ դարձար, սիրտդ լիքը, աչքդ քաց:
Անարգ հեռվի կայանների օբյակներում անտանիք՝
Նորից մտքումդ լողում են գրկված ազգ ու հայրենիք՝ :

Շտուտգարդ, 18.05.1948թ

¹ Մուրագրությունը՝ Մ. Գուրգեն: Սկզբնառատներով կարդացվում է Լևոն Բեկ Մելիքյան: Հավանաբար ծածկագրության նպատակով Մելիք-Ավալյան ազգանունը գրել է Մելիքյան: Թեև դրանք Մելիքյանների մի ճյուղն են: / Բ. Մելյան/:

² Մ. Գուրգեն - Ակրոստիքոս: - Ալիք - /Շտուտգարդ, 1948, N 1 էջ 21/: Գուրգեն Գուկասի Մուրադյանի մասին տես: Մելյան Բ. - Կարոտակեզ բանաստեղծը: - Այգաբաց, - (Բերդ), 1991, 30 հունվարի N 8:

Նամակ "ԱԼԻ-Բ"-ի խմբագրությանը

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՅՆԵՐ

Մայիսի 18-ին, իմ ծննդյան օրը որևէ բանով նշելու ո՛չ ցանկարյուն մտնելի, ո՛չ էլ տրամադրություն: Մակայն մի խումբ սիրաշահ հայրենակիցներ իմանալով ծննդյան օրվա մասին, իրենց նախածեռնությամբ, համապատասխան նվերներով, երեկոյան ժամը 8-ին սենյակս մտան և ինձ բարոյապես հարկադրեցին իրենց ընդունել:

Զգալով հայրենակիցներիս սրտարոխ, հոգատար վերաբերմունքը, ես անհամոռն հուզվեցի, մի սրահ ինձ զգալով հարազատ հայրենիքումս՝ շրջապատված իմ մտերիմներով:

Ջերմորեն զնահատելով իմ հայրենակիցների ու բարեկամների ցուցաբերած պատիվը, խնդրում եմ հնարավորություն տաք ինձ "Ալիբ" քերթի միջոցով իմ ամենախորին շնորհակալությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր սրարտք համարեցին առանց հրավերի նշանավորելու ծննդյանս 65-րդ տարին:

Յարգանքներով՝ Լևոն Բեկ:

Շտտագարդ 05.06.1948թ.¹

¹ Ալիբ: - /Շտտագարդ:- հանդես, / 1948, N 1, էջ 21-22

ԼԵՎՈՆ ԲԵԿԻՆ

Գու Տավուշի հարգանք, պարծանք, քե ու քիկունք՝ ԼԵՎՈՆ ԲԵԿ,
Խոսք ու գործոյ եղել են միշտ արդարացի, վճարքէկ,
Ով քանդել է, դու շինել ես քանդված տունը հայկական,
Մեզ վրկերով կործանումից, ծանր լծից քուրքական:

Կրկներգ-

Մահն էր իշխում մեր օջախում, դու հաղթեցիր սե մահին,
Հայի բախտն էր կարծես գրված քո ճակատին ու քրին,
Շատ փոքրիկ տեսանք, զիտես, դու հաղթել ես փոքրիկին,
Գու չես քնել, երբ սախը նեղն է գցել քո ազգին:

Ինձ Տավուշի ամեն մի քար, ամեն մի ծառ սուրբ է, սուրբ,
Գու քո սրտում պահել ես միշտ հայի սերը վեհ ու նուրբ,
Մարդիկ սիրել, երդվել են միշտ, քո անունով, քո գործով,
Հայը կովել, հաղթել է միշտ քո սլանձալի վեհ փորձով:

Կրկներգ- Մահն էր իշխում ...


Քո շատ սիրած Տավուշ գետը շատ է տեսել մահ, արյուն,
Մուրաբ սարից մինչև Քուռ գետ ծանր բեռ էր քո հոգուն,
Երկրե-երկիր անցար ախար, վերջում եկար դու Տավուշ,
Մեր սրտերում կապրես հավերժ, քանի մերն է կյանքն անուշ:

Կրկներգ- Մահն էր իշխում ...


18-ր օգոստոսի 1998թ, ք. Բերդ:

Ad leno - petya


Григорий и Зинаида




Г-ри-го-ри-й - Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да




Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да




Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да



Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да



Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да



Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да - Гри-го-ри-й - Зи-на-и-да

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: Կըր - Տա - շա - շից ըստ - ըր - Յից

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: Երբ - զա - Կարն

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: Գրեցիս ... Երան Եր Բը - Կամ Եր Ե - զա - Կամ

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: Դա Կար - Եր - Գրիս և Ե Տա - Կար Կար Կար Եր

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: Կար - Տա Կար - զամ Կար - Կար Կար

Handwritten musical notation on a single staff with lyrics below it. The lyrics are: և Կար - Կար Կար Կար Կար Կար

Handwritten musical notation on a five-line staff with a treble clef and a key signature of two flats (B-flat and E-flat). The melody consists of several notes, some with stems and beams. Below the staff, there are two lines of handwritten text in a cursive script, likely representing lyrics or a transcription of the notes.

Handwritten text below the staff:
 opt-aur 70-761 700 long - 167 100
 opt-aur 70-761 700 long - 167 100

Handwritten musical notation on a five-line staff with a treble clef and a key signature of two flats. The melody continues with several notes and rests. Below the staff, there are two lines of handwritten text.

Handwritten text below the staff:
 700 - 1000 - 761 700 761 700 700

Handwritten musical notation on a five-line staff with a treble clef and a key signature of two flats. The melody continues with several notes and rests. Below the staff, there are two lines of handwritten text.

Handwritten text below the staff:
 700 761 700 - 761 700 761 700
 700 761 700 - 761

Handwritten musical notation on a five-line staff with a treble clef and a key signature of two flats. The melody consists of several notes and rests, ending with a double bar line. Below the staff, there are two lines of handwritten text.


Handwritten text below the staff:
 700 - 761 - 761




*ՆԿԱՐ N 1. Լևոն Բեկր կնոջ՝ Օլգա Պետրոսի Սարգսյանի
Մելիք-Ավալյանի հետ (մոտ 1958 թթ. նկար ԱՄՆ-ում):*




ՆԿԱՐ N 2. Լևոն Բեկը Մոսկվայում, համալսարանի ավարտական ճաշկերույթին թշնամաբար թունավորումով սպանած, եղբոր Տիգրանի տղայի՝ Արտուշի հուղարկավորությանը, հանգուցյալի մոտ՝ Վարդուհու հետ: Վերջում կանգնածները Արտուշի ընկեր Ռոբերտ Սերգեյի Վարդազարյանը Ջորաթան գյուղացի Տեր-Օհանյան տոհմից: Սա ևս ուսանող էր: Կանգնած է նաև չեկիստը: (Մոտ 1937 թ. նկար):




ՆԿԱՐ N 3. Նկարի դարձերեսին Լևոն Բեկը գրել է. «Հանգուցյալ տիկին Ավայանին յարգող բազմությունն այնքան շատ էր, որ Լոս Անջելեսի մեծ եկեղեցուն բոլորին տեղ չէր պակ և ժողովրդի մի մասը մնաց կանգնած եկեղեցու դռան առաջ»:




ՆԿԱՐ N 4. Լևոն Բեկը գրել է. «Կանգնած է պարոն «Ն»-ն, որն իր ելույթով խորը ցավակցություններ է հայտնում տարաբախտ տիկին Օլինգա Ավայանի կորստի համար»:



ՆԿԱՐ N 5. Լևոն Բեկը գրել է. «Դա հիլիծի (հոգեհացի ճաշի) գլխավոր սեղանի մի մասը: Կանգնած է ժողովուրդապետ-լրագրող պարոն Գրիգոր Ամիրյանը, որը խոստում է հանգուցյալ տիկին Ավայանի արժանիքների մասին»:



ՆԿԱՐ N 6. Լևոն Բեկը գրել է. «Դահլիճի մի անկյունից երևում են հոգեհացի ճաշի սեղանները»:



ՆԿԱՐ N 7. Նկարի դարձերեսում նույն ձեռագրով գրված է. «Կանգնած է հանգուցյալ տիկին Օլինգա Ավայանի սգավոր ամուսինը՝ Լևոն Ավայանը, որը ընդհատումներով, ավելի ծիշտ ջրի օգնությամբ, իր երախտագիտական մեծամեծ շնորհակալություններն է հայտնում բոլոր ներկաներին, սեղան պատրաստողներին, ելույթ ունեցողներին և բոլոր նրանց, որոնք հարգելով հանգուցյալ տիկին Ավայանի թարմ հիշատակը՝ ներկա եղան հոգեհանգստյան արարողությանը և հոգեճաշին»:



ՆԿԱՐ N 8. Լևոն Բեկի ձեռքով գրված է. «Հոգեհանգստեան արարողութիւնից և հոգեճաշից յետոյ, ցրող բազմութիւնը, ձեռքի սեղմումներով իրենց վերջին մխիթարական ու ցաւակցական խոսքերն են յայտնում սգաւոր Լևոն Աւալեանին»:



ՆԿԱՐ N 9. Լևոն Բեկը Երևանի «Արմենիա» հյուրանոցում իր հայրենակից՝ Չորաթան գյուղացի (տողերիս հեղինակի մորաքույր) Եկատերինա Լևոն-Բեկի Քալանթարյանի (Կատյուշի) և մեզ անհայտ մի տղամարդու հետ՝ 1962 թվին: (Բ. Մելյան, 14 հոկտեմբերի 1998 թ., ք. Երևան):



ՆԿԱՐ N 10. Լևոն-Բեկը Երևանի «Արմենիա» հյուրանոցի առաջ մի խումբ հայրենակիցների հետ՝ 1-ին շարքի ծախից աչ՝ վերջում կանգնած տղամարդը՝ Լևոն-Բեկի եղբայր Տիգրանը աղջիկ Մարուսյայի անունին Հայկ Ջիջակյանն է: 2-րդ շարքի 2-րդը՝ Լևոն-Բեկը (լայնեզր գլխարկով), 4-րդը՝ Սերգեյ Միքայելի Սարգսյանը (Բերդից): Սրա թիկունքում աջում՝ ժորա Սամսոնի Մելքունյան (Բերդ), վերջում կանգնած՝ Համլետ Մարտիրոսի Ղևնյանը՝ քաջալը (Այգեծորից): Մյուսներին լճանաչեցին... Նկարի դարձերեսում Լևոն-Բեկի ձեռքով գրված է. «Նկարված ենք 17 հուլիսի 1962 թ., ք. Երևան»:




ՆԿԱՐ N 11. Լևոն Բեկի եղբայր Տիգրանի աղջկա՝ Մարուսյայի և տղայի՝ Ազատի հանդիպումը շատ երկար բաժանունից հետո Նալչիկ քաղաքում, ուր ապրում է Ազատը, (1970 թ.):



ՆԿԱՐ N 12. Լևոն-Բեկի կինը՝ Օլգան (աջից) քրոջ Թագուհի Պետրոսի Սարգսյանի հետ (մոտ 1960 թ., Բերդ քաղաքում):




ՆԿԱՐ N 13. Լևոն-Բեկի կնոջ՝ Օլգայի եղբայրը՝ Արտեմ Պետրոսի Սարգսյանը (Ղոնդաղսագանց՝ 1886-1961), Սիբիրի արքայազնից Բերդ գյուղ վերադառնալուց հետո՝ 1958 թ.: Ուն տնից էլ հուղարկավորել են Օլգային:



ՆԿԱՐ N 14. Լևոն-Բեկի կյանքի ողիսականի վերջին հանգրվանը՝ Բերդ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու գերեզմանոցում՝ Լևոն-Բեկի (1879-1962) սուրբ շիրիմը կնոջ՝ Օլգայի եղբայր Արտեմ Պետրոսի Սարգսյանի (1886-1961) շիրիմների հարևանությամբ:

ՏԱԿՈՒՇԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ՄԵԼԻՔՅԱՆ ՏՈՂՄԻ ՄԻ ՃՅՈՒՂԸ
 Կազմեց՝ Քնարիկ Սամսոնի Ավալյանը
 զօժեց՝ Բ. Գ. Մելյանը



- Ծանոթութ.- 1 Ավազի որդի Հանեսի ճյուղը Քնարիկը չի արձանագրել:
- 2 — Եշանակում է տղա ժառանգ չի ունեցել կամ ազաբ է մահացել:
- 3 Արտեմի թոռ Մարուսյան է Լևոն Բեկի սուրը և ատորճանակի արծաթապատ պատյանը հանձնել Երևանի թանգարանին, որը գրանցված է 79-24 համարի տակ:
- 4 Ալեքսան Բեկի թոռ Քնարիկ Ավալյան-Սուլյանն է կազմել իրենց մեծ տոհմից այս ճյուղը:
- 5 Ավալի որդի Համբարձումը՝ ժողիկ կտրող մականվամբ, ապրել է Ն. Կարմիրաղբյուրում:

27 հունվարի 1999 թ., ք. Երևան

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարտնչող մրկահավը	5
Ժողովրդի հիշողությունը	6
Մելիքյան տոհմից մի ճյուղ	7
Արվեստին նվիրված մի ընթացիկ	9
Ընդդեմ դաշտայնների	11
1905 թվականի հայ-թուրքական կռիվները	14
Լևոն Բեկը նվաճել էր ժողովրդի սերը	16
Պայքարը շարունակվում է	18
“Կովի ծախսիր, հրացան առ”	20
“Հայը հայ չպե՛տք է սպանի”	22
Թշնամու նկրտումներին ընդդեմ	24
Պարսությունն անխուսափելի էր	26
Ստիպված էր հեռանալ	27
Բարությունը իր սուսզն է գալիս	29
Ընդդեմ կոլեկտիվացման	31
Նոր պաշտոնում կամ մի նոր աղբերգություն	35
Անակնկալ հարված ևս	36
Սկզբից մեծ, աշխարհակարծան արհավիրքը	38
Ինչ են վկայում գրավոր աղբյուրները	44
Ի՞նչ եղավ հետո, կամ ինչպես տնօրինեց ճակատագիրը	49
ՆԱՅԻՐԻ ՍԻԳԵՎԱՆ ԼԵՎՈՆ ԲԵԿ	53
Մարտյան Գուրգեն Ա Կ Ր Ո Ս Տ Ի Ք Ո Ս	54
Նամակ “ԱԼԻՔ”- ի խմբագրությանը	55
Գուսան ԱՆԳՐԱՆԻԿ ԼԵՎՈՆ ԲԵԿԻՆ	59
Նկարներ	73
Տոհմի մի ճյուղը	73

Մեյան Բալարեկ Գրիգորի

ԼԵՎՈՆ ԲԵԿ

(Հուշավավերագրական դրվագներ կյանքից)

Երևան-1999

Խմբագիր՝ Զ. Ու. Մելքունյան
Համակարգչային շարվածքը՝ Զ. Խոսրովյան-Մեյան
Տեխնիկական խմբագիր՝ Ա. Ս. Մեյան

8. 02. 99 թ., ք. Երևան

Շնորհակալություն Տավուշի շրջանային կենտրոնական գրադարանի տնօրեն ժենյա Մաթևոսյանին՝ մեզ օգնելու, բոլոր հուշագիրներին և նրանց ովքեր նպաստեցին մեր հարգարժան հայրենակցի՝ Լևոն Բեկի մասին, մեր համեստ աշխատանքը լույսաշխարհի գալուն: Բ. Մ.:

[200pp]

A $\bar{11}$
85337

